

ՍԻՈՆ



Ս· ՏԱԿՈՐԹԱՆՑ ՎԱՆՑ ԲԵՐՈՒԽԱՂԵՄ

«Սիոն»، مجلة ارمنية شهرية، دينية، أدبية، ثقافية، لغة والبيان.
"SION" an Armenian Monthly of Religion, Literature and Philology

ՅՈՎ. Ա. Ն Դ Ա. Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ԵՐԵ

<p>Կոնդակ Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետեան, Սրանաւորոն Տ. Տ. Գևորգ Զ. Հայրապետի մահուան տասնամեակին առքիւ</p> <p>ԽՄԲԱԴՔՐԱԿԱՆ</p> <ul style="list-style-type: none"> — «Քրիսոս յարեաւ ի մեռելոց» <p>Ո. ԳՐԱԿԱՆ</p> <ul style="list-style-type: none"> — Օսարականը <p>ԿՐՈՆԱԿԱՆ</p> <ul style="list-style-type: none"> — Կարմրալանջը <p>ԲԱՆԱԾԵՂԾԱԿԱՆ</p> <ul style="list-style-type: none"> — Սպասում — Աճանօթ տեսիլը — Պատասխան — Քառեակ — Կու զայ զարունը — Խնմանանաշում <p>Մարդը</p> <p>ԲԱՆԱԾՈՒՐԱԿԱՆ</p> <ul style="list-style-type: none"> — Ստեփանոս Դոյմերերիցանց — Ֆիլատէլիիոյ հայերեն ձեռագիրները — Իերը Յոր ԺԶ. 4ի մէջ <p>ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱԼԵՔԵՐ</p> <ul style="list-style-type: none"> — Ս. Կիրակոսի Անապատ <p>Ցուցասօն Ապրիլեան զոհերուն համար</p> <p>Ո. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ</p> <ul style="list-style-type: none"> — Եկեղեցական - Բեմական — Պատօնական — Նուազահանդէս 	<p>113</p> <p>118</p> <p>121</p> <p>125</p> <p>127</p> <p>128</p> <p>129</p> <p>129</p> <p>130</p> <p>130</p> <p>131</p> <p>133</p> <p>137</p> <p>139</p> <p>141</p> <p>142</p> <p>143</p> <p>144</p> <p>144</p>
---	--

**ՍԻՌՆ - ի Տարեկան Բաժնեգինն է,
բոլոր Երկիրներու համար, Անգլ. Շիլին 20**

Redaction of the Armenian Monthly SION

Armenian Patriarchate,

P. O. B. 4001

Old City - Jerusalem (Jordan)

Ս Ի Ո Ւ

Լ.Բ. ՏԱՐԵ - ՆՈՐ ՇՐՋԱՆ

1964

Մայիս

Թիւ 5



ԱԶԳԵՆ ԾԱՌԱՅԹԻ Ի ՊԼՈՇՈՒԹԵԱՄ ԱՅԵՒԿԱՄՕՆ
Ազգի Եղանակութեան և Կթական Մահաման Հաջոց Ծպառագուցն
Պատրիարք Համագույն Առաքելաց Աթոռութեան Վուշտ-
Հակառ Մայր Եկեղեցական Սրբութ Էջմիածնի

ՔՐԻՍՏՈՍՈՒԹԵԱՆ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՑՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԵԾԻ ՏԱՐՆ ԿԻԼԻԿԻՑ Տ. Տ. ԽՈՐԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՅ,
ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԱՅՈՑ ՄՐՅՈՑ ԵՐՈՒՍԱԼԵՄԱՑ Տ. ԵԼԻՇԵՒ ԱՐՔԵՊԵՏՈՎՈՍԻՆ,
ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՈՒՈՑ Տ. ՇՆՈՐՀԲԱՑ ԱՐՔԵՊԵՏՈՎՈՍԻՆ,
ՀԱՄՈՐԵՒ ԱՐՔԵՊԵՏՈՎՈՍՈՑ ԵՊՈՆՈՎՈՍՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՐԱՑԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՆԱԳԻՑ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՈՒՄԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՎԱԿԱՆ ԽՈՐՃՐՈՅՑ
ԵՒ ՊԱՇՏՈՆԵՒՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՄՐՅՈՑ
ԵՒ ՄԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՄԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՀԱՅՈՑ

• Բ վախճանել առ ն արզարոյ . ոչ կորհչի յոյշ :
(ԱՌԱԿԻ ԺԱ 7)

Հայոց հինաւուրց աշխարհէն , եկեր ու անցեր էին օրերը ձմբան : Արա-
րատի յաւերժական նայուածքի տակ , Հայաստանի Մայր Հողը ծածկուեր էր
կրկին ծիլ ու կանաչով , ծաղիկ զորդերով : Հայ ժինականը , աշքերը լեցուն
կեանքի երազով , իր պապերու արտն ու այզին կը բանար , զոհութեան աղօթքը
շրթներուն առ բարձրեալն Աստուած , երբ Ս. Էջմիածնի կամարներուն տակ ,
խաղաղ , անվրդով , իր աշքերը կը փակէր Հայրապետը Հայոց՝ Գէորգ Զ
Նոր - Նախիչևանցին :

Քարնան պայծառ առաւօտ մըն էր՝ 1954 մայիս 9-ը :

Երախտագէտ Հայ Եկեղեցին և հայ ժողովուրդը ծանր սուզի զբօշ պար-
զեցին ու փառքով , աղօթքով , Մայր Հողին յանձնեցին յոզնած մարմինը . մեծ
Հայրապետին :

Այդ օրէն անցեր են արդէն տասը տարիներ :

Տարիները բագում յիշատակներ կը տանին իրենց հետ , յանձնելու
համար զանոնք զիրկը զորշ մոռացութեան : Բայց կան յիշատակներ , որոնք
անցնող տարիները առաւել կը լուսաւորին , առաւել կ'արժենորեն ու կեանքի
կը կոչեն : Ժամանակը ինքն է իրաւ դատաւորը մարդոց կեանքին , անոնց
գործերուն : Աստուածային նախախնամութիւնը , պատմութեան դատաստանով ,
արդարութիւն կը զործէ :

Յիշատակը Գէորգ Զ Կոթողիկոսին այդպէս ահա կը ներկայանայ այսօր ,
մեր զիտակցութեան տռաջ :

Անձնաւորութիւն մը , հոգիով ու մարմնով տռող , ամրակուռ , Հայոց
աշխարհի լեռներուն նման : Նկարագիր մը հզօր ու ազնիւ , խոր զգացումովը
մարդկային բարոյականի բարձր արժէքներուն : Հաւատաւոր , աներեր հոգի և
քաջ Հովուապետ , աւելի քան վաթսուն տարիներու հաւատարիմ ծառայու-
թեամբ : Աւստեալ զինուոր և սիւն Եկեղեցւոյ , և արթուն լուսարար Ս. Էջ-
միածնի : Ճարտար նաւապետ փոթորիկներու պահուն , անվեհեր առաջնորդ իր
ժողովուրդին դէպի նաւահանգիստը խաղաղ տփերու : Պաշտպան հայրենաց ,
խիզախ , աննահանջ , հայկական հոգիի մարմնացած վահան : Հայրենասէր՝ իր
ամբողջ էութեամբ , բովանդակ իր կեանքով , մտածումներու և տեսիլքներու իր
ամբողջ աշխարհով , իր կենդանի զործով :

Ահա ան , երիտասարդ վարդապետ , մէկ ձեռքին մէջ բռնած խաչը
Քրիստոսի , միւսին՝ զիրքը հայոց պատմութեան , աւելի քան քսան տարիներ
կըթական մշակ , հմուտ քարոզիչ և կազմակերպիչ հոգեոր կեանքի , իր ծննդա-
վայր Նոր - Նախիչևանի մէջ :

Կուզան սակայն մռայլ ու ծանր օրեր : Համաշխարհային առաջին պա-
տերազմն է բռնկած : Արևմտեան Հայաստանի մէջ կը նահատակուի ժողովուրդ

մը ամբողջ՝ Տեղահանութիւն, սով, արիւն և մահ։ Սպանդի ճիշտաններէն հրաշքով փրկուած, անվերջ կտրաւաններ թշուառ հայերու, կը թափուին Արաքսի ափին։

Նորապսակ Գէորգ եպիսկոպոս, հուժկու ձեռքերով և հայ մարդու արի իր սրտով, կանգնած է ամուր՝ դալթականներու փրկութեան զործի առաջին զծերուն վրայ, կտարելով իր պարտքը իրքն անձնդիր ու բարի Հովիւ և հարազատ զաւակը հայ ժողովուրդին։

Պատերազմէն յետոյ դժուար տարիներ, ալեկոծումներ, հերոսական ճիղեր՝ բուժելու համար վէրքերը հայոց վիրաւոր ազգին և վերաշնելու քանդուած կտուրը հայ հայրենիքին։ Բայց շուտով ահա խաղաղութիւն և նոր վերածնունդ, երջանիկ կեանքի պայծառ լուսաբաց։ Գէորգ եպիսկոպոս, զուազանը ձեռքին, բազում տարիներ իր ուժերը ի սպաս կը դնէ Հայ Եկեղեցւոյ ամրապնդման զործին, Վրաստան, Հայաստան և Ա. Էջմիածին։ Աստուծոյ խօսքը կը քարոզէ ան իր ժողովուրդին, իը լուսաւորէ, լոյս կը ներչնչէ ու կը մսիթարէ։

Մայր Աթոռ է ան իրքն Տեղակալ Կաթողիկոսի, երբ կը բռնկի նոր պատերազմ մը համաշխարհային։

Հայ ժողովուրդի ամբողջ, մէկ մարդու նման, ոտքի է կանգնած, աղատատենչ եղբայրուկան ժողովուրդներու կողքին, մղելու համար հայրենական սրբազն կուի, խաւար ու դաժան չար ուժերու դէմ։

Հանգուցեալ Հայրապետը ներկայ է կրակի դիմաց, հայրենեաց պաշտպան հայ ժողովուրդի զաւակներուն հետ։ Չեն մոռցուիր երբեք կոչերն իր մարտի, քարոզներն իր հուր և իր ծաւալած կազմակերպչական զործը հսկայական, զինուորազրելու համար Հայաստանի և Սփիւռքի բոլոր հայերը։ Սասունցի Դաւիթի անունը կրող հրասայլերու շարասիւները ընծաներն են Հայոց Հայրապետին, հայրենական փառապանծ յաղթանակին համար, օժանդակութեամբը նոյնքան հայրենասէր Գարեգին Ա. Հայրապետին Տանն Ախլիկիոյ, որ Սարգարաբարէն յետոյ, անզամ մը ևս իր անունը կ'արձանագրէր մեր ազգի պատմութեան զրքի մէջ ոսկի տառերով։

Եւ երբ հօրիդոնէ հորիզոն, մեծ յաղթութեան շեփորները կը հնչէին, Գէորգ արքեպիսկոպոս, 1945-ի դարնան օրերուն, կ'օծուէր Կաթողիկոս Ամենայն Հայոց, ողորմութեամբն Աստուծոյ և կամքովը ազգին։

Հայոց հին երկրի վրայ կ'իջնէր նոր առաւօտ և կը բացուէր հայրենաշչն կեանքի լուսեղէն ճամբայ։

Նոր կեանքի կը կոչուէր հայ Եկեղեցին։

Երբունազարդ Հայրապետը Հայոց, ժամանակներու, պատերազմներու աւերիներէն յետոյ, Ա. Էջմիածնի կամարներուն տակ, կը ստեղծէր ամէն բան զրեթէ ոչինչէն։

Մեծ հայրենասէրը եղաւ նաև մեծ Հայրապետ :

Վերակաղմեց միաբանութիւնը մեր Մայր Աթոռի, բացաւ գուռները չողեար ձեմարանին, հիմնեց Շիմիածին ամսազիրը, բարեկարգեց ու կազմակերպեց ներքին թեմերը, և բնականոն ու սերտ զործակցութեան կապեր հաստատեց մեր նուիրուակնական Աթոռներուն և արտասահմանի մեր թեմերուն հետապատճեն մեջ ամենայն Հայոց :

Գէորգ Զ Կաթողիկոս, իր հոգեոր բարձր հեղինակութեան ներքե, անխռով պահպանեց հոգեոր միութիւնը Հայ Եկեղեցւոյ և միասնութիւնը հայ ժողովուրդին : Զի այդ է պատկամը հայոց պատմութեան և կամքն Աստուծոյ, որուն Միածին Արդին Հայաստան իջաւ : և այստեղ հաստատեց Սրբութիւն Սրբոցը ամենայն Հայոց :

Հոգելոյս Հայրապետը եղաւ ու մնաց մինչև իր կեանքի վերջը՝ նաև մեծ աղօթող մը և պայքարող մը վասն խաղողութեան համայն աշխարհի : Իր հեղինակաւոր խօսքը, իր արդար ձայնը տեապէս հնչեցին հզօր Էջմիածնի սուրբ բարձունքներէն :

Գէորգ Զ Կաթողիկոսի կեանքն ու զործը մարմնացումն իսկ են աստանա ծային խաղաղաբարոր կամքին ու հայոց պատմութեան հարագատ ոգիին :

Ահա վաստակը Հայոց Հայրապետին, որուն մահուան տասներորդ տարելիցը կը կատարենք մենք այսօր :

Ով զիտէ իր կեանքն ու իր զործը ընծայաբերել իր Մայր ժողովուրդին, իր Մայր Հայրենիքին, ով կը տեսնէ յատակ, կեանքը ալեկոծող հոսանքներուն մէջէն, ազգի ու Մայր Երկրի յաւիտենական շահերու ուղին, ան կը մնայ ճշմարտապէս մեծ և յիշատակութեան արժանի պատմութեան զրքին մէջ :

Կը տօնենք Գէորգ Զ Հայրապետի յիշատակը, իրեն Հայ Եկեղեցւոյ ու հայ ժողովուրդի յաղթանակի օր : Կը տօնենք ուրախ, հպարտ սրտերով, որ Տէրը մեր Եկեղեցիին պարզեցր էր Հոգուապետ մը մեծ, նման երանեալ հայրապետներուն, որոնք պայծառ հետք են թողած Հայոց աշխարհի Երկնակամարին վրայ :

Տասը տարի յետոյ, հինուուրց մեր Երկրի վրայ, կրկին իջած է զարունը կեանքին : Նոյն Արարատի յաւերժական հայուածքին ներքե, Մայր Հողն Հայաստանի զարթնած է կրկին, ու ծածկուած ծիլ ու կանաչով, վառ ծաղիկներով : Հայ շինականը նոյն երազներով, նոյն երդն իր շրթներուն, իր պատենական արտը կը հերկէ, երբ Ս. Էջմիածնի լոյս կամարներէն աղօթք կը բարձրանայ դէպի Երկնքը բարիք՝ վասն խաղաղութեան հոգւոյն հանգուցեալ մեծազործ Հայրապետին մերոյ՝ Տ. Տ. Գէորգայ Զ Կաթողիկոսին Ամենայն Հայոց :

Երանաշնորհ Հայրապետի հոգին, կեանքի միւս ափին, կը հանգչի խաղաղ, կը հանգչի երջանիկ, ու կ'ողեշնչէ մեզ և պատզամ կու տայ բոլոր հայերուս ապրիլ անրաժան, սիրով միաբան, ամուր պահպանել լոյս հաւատքը մեր քրիստոնէական, ամբողջ, անխռով ու ծաղկեալ պահել Ս. Եկեղեցին, չէն, անշարժ

պահել համայն հայութեան հոգեոր կեղրոն Ս. Եջմիածինը մեր, և բոլորուիլ սիրով, հաւատարմութեամբ, վերածնած լրայր Հայաստանի սուրբ հոգի վրայ, կերտելու համար լուսափայլ տակացան հայ ժողովուրդին:

Այսու Մեր կոնդակաւ կը հրահանզենք, որ լուսաբնակ Գէորդ Զ Կաթողիկոսի մահուան տասներորդ տարելիցին առթիւ, Հայաստանեայց բոլոր եկեղեցիներուն մէջ հոգեհանզստեան պաշտօններ կատարուին կիրակի, մայիս 10-ին:

«Երանի մեռելոցի, որք ի Տէր ննչեցին, զի զործ իւրեանց չոգան զի՞ւ նոցա» (Յայտնթ. ԺԴ 13)

Ողջո՞յն և փա՞ռք Գէորդ Զ մեծ Հայրապետի լոյս յիշատակին:

Ողջո՞յն և փա՞ռք Հայ Առաքելական Ս. Եկեղեցին և հայ հաւատացեալ համայն ժողովուրդին:

Ա. Է. Հ.

Տուա Կոնդակս յ-9-ն մայիսի
1964 Փրկչական ամի,
եւ ի տօւմաւի Հայոց Ռէժի,
ի մայրավանս Արքոյ Եջմիածնի:
Հմք. 487




Կայած Հեն.
ԹԱՅՐԻԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ ՆԻ ԿԱՐՈՅԴՎՈՒԹՅՈՒՆ
ԱՄԵՆԱՅՆ 18.05.64



ԽՄԲԱԳՐԱԿԵՆ

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ Ի ՄԵՌԵԼՈՑ»



Որքա՞ն ճիշդ է այն մտածումը, աւելի ճիշդ՝ արտայայտութիւնը, թէ Զատիկը ծաղկած օրն է տարուան, որուն մէջ կեանքի յաւերժականութիւնը և Աստուծոյ սէրը այնքան հրաշալիօրէն կ'ապացուցուին։ Անշուշտ թէ սերման ուած ցորենահատը պիտի վերընձիւղուէր հրաշալիօրէն, չնորհիւ այն ներքին ուժին և զօրութեան՝ զոր ունէր Քրիստոսը։ Եւ ասիկա չէր կրնար տարբեր ըլլալ Մարդու մը պարագային, որ ամբողջական կատարելութիւն էր և զլուխ գործոցը ստեղծագործութեան։ Մէկը որ կրնար հասկնալ բորոտութիւնը բռուաներուն, խաւարը կոյրերուն, թշուառամտութիւնը հաճոյասէրներուն և հոգիի ու մտքի աղքատութիւնը հարուստներուն։

Անշուշտ Յիսուսի տեղը այս աշխարհի մէջ իրեկ մարդ և Աստուած, ստեղծագործողներու մէջ է։ Մեծագոյն ստեղծագործը Աստուած է ինքնին, որ կը չանայ և կը նիւթէ իրարմէ անջատուող և հինցող մասերը տիեզերական մեծ կազմակերպութեան։ Յիսուսի համար մարդկութիւնը ամբողջութիւն մըն է առանց ցեղի, զոյնի և կրօնի խտրութեան։ Անիկա կրնար յարաբերութեան մէջ ըլլալ մեղաւորին և սուրբին, բռնակալին և աւաղակին, մանուկին և ծերին հետ, ինչպէս նաև արևու, քարի և զանազան աստուածութիւններու պաշտամունքը ունեցող մարդերու և աղքերու հետ։

Փեսան էր սիրտերուն, հովիւը մարդերուն, բարոյախօսն ու բանաստեղծը հողիններուն, մեծ երաժիշտը Աստուծոյ Քաղաքին, որու անհուն սիրոյն գէմ շատ փոքր կուզայ աշխարհը։ Իր հրաշագործութիւնները բնական բերումներն են իր հոգիի ծաղկումին, յաւիտենական զարունին, զոր Ան ունի իր մէջ, և հետեաբար ինչ բանի որ հպի, զայն կը վերանորոգէ և կը կենդանացնէ։ Անիկա դալար ու ծաղկուն ծառն է մարդերու չոր անտառին, ամբողջ, հետեւաբար խաղաղ ու երջանիկ։ Ով որ հպի իրեն՝ կը մերկանայ իր ցաւերէն և տրտութիւններէն։ Կոյրը Անոր քսուելով կը լուսաւորուի, խուլը կը լոէ, զիւհարները կը խաղալին և մեռելները կեանքին կը դառնան։ Իր խօսքին ու ազդեցութեան տակ մարդիկ կը մոռնան իրենց քաղցը, և իր հետ չուր խմուները անուշահամ զինի ճաշակածի պէս կը բերկըին հողեպէս և մարմնապէս։

Մէրը զերագոյն զաղտնիքն էր իր հոգիին, և այդ մեծ զգացումին չնորհիւ էր որ Ան կրնար հպիլ թէ՛ բորոափ և թէ Աստուծոյ սրտին։ Հոգիններու այդ աշխարհին Ան կուտար երկնքի Արքայութիւն անունը։ Անսահման էր իր զութը ինչպէս անկեալին, այնպէս ալ աշխարհի հզօրներուն նկատմամբ։ Անիկա կը զդար բոլորին ողբերգութիւնը հաւասարապէս և կը ցաւէր որ կարելի չէր փուշերէն խաղող և տատասուներէն թուզ քաղել։ Երբ կ'ըսէր թէ ներողամիտ եղէք ձեր եղբօր նկատմամբ, կ'ըսէր ո՛չ յանուն անձին, այլ եղբայրութեան։

երբ կ'ըսէր իրեն եկող հարուստ երիտասարդին որ բաժնէ իր ունեցածները աղքատներուն, այս վերջիններու հաշոյն չէր որ կը մտածէր, այլ հարուստ այն երիտասարդին, որ իր հարստութեան մէջ մեղկացած, դուրս կը մնար մարդկային ընկերութենէն։ Երբ կ'ըսէր ներեցէք ձեր թշնամիներուն, այս վերջիններու հաշուոյն չէր որ կը խօսէր, այլ որովհետեւ սէրը աւելի կ'արժէք քան ատելութիւնը։ Իր աշխարհ զոլէն առաջ մարդկային պատմութիւնը կը խօսէր անհատներու մասին միայն, իրմով կը սկսի մարդկային պատմութիւնը։

Անիկա կ'ուզէր ըլլալ տկանչը խուլերուն, աչքը կոյրերուն, լեզուն համըերուն, առողջութիւնը հիւանդներուն և կեանքը մահացողներուն, որպէսզի բոլորը իր հետ և իր մէջ կարենային զգալ ու սիրել երկնաւոր Հայրը և զիրար, որդիարար և եղբայրօրէն, նման երաժիշտ մեծ խմբավարին որ զանազան ձայներէն կը յօրինէ ներդաշնակութիւնը նուազին և նուազախումբին։

Սակայն անկատարութիւնը միշտ թշնամի է կատարելութեան։ Յիսուսի դատապարտութիւնը և մահը ապացոյցներ են մարդերու այս արարքին։ Բայց կեանքի մէջ կարելի չէ որ սուտը յաղթէ ճշմարտութեան և անկատարը կատարեալին։ Նոյնիսկ Յիսուսի հաւատացողները չէին սպասեր Յարութեան, և ստիպուեցան ընդունիլ զայն զրեթէ արտաքին և յաղթահարիչ բռնադատութեամբ մը և շատ գեղեռումներէ վերջ միայն։ Դիւրին չէր մարսել մարդկային պատմութեան այս անակնկալը, որ գժուարաւ կը հաշուուէր հրեայ աւանդամոլ մտքին հետ։

Մահուան օրէնքներուն այսպէս արտասովոր բզկտումը դիւրին ըմբռնելի պիտի շըլլար, այնպէս որ Յարուցեալին աշակերտներն իսկ, որոնց խօսած էր Ան իր Յարութեան մտսին, տրամադիր չէին առանց փորձերու և հակափորձերու ընդունելու զայն։ Տեսած էին ժամանակին, որ յարութիւն էին առեր նայինի այրիի որդին, Յայրոսի աղջիկը, Մարթայի և Մարիամի եղբայրը։ Սակայն տասներկութին ընութիւնն ու ճակատազիրն էր շատ մը բաներ զէշ հասկընալ և մոռնալ։ Մարմնական մտածումներու մէջ իրած, դժուար էր հաւատալ անոնց, առանց վարանումներու, մահուան վրայ եղած այս փոխ վրէժին, յաղթանակին։ Բայց երբ համոզուեցան, իրենց հաւատքը այնքան պայծառ ու հաստատուն եղաւ, որ իրենց հաւատքի սերմէն, իրենց արիւնով թրջուած, ծնաւ Յարուցեալի հաւատքին մէջ յարուցեալներու անվերջանալի հոսանքը, որուն քաղը տակաւին չէ վերջացած, չըսելու համար թէ նոր կը սկսի։

Փոքրողիները ինչպէս այն ատեն, այնպէս ալ այսօր չեն ուզեր հաւատալ յաւիտենական կեանքին, որ իր մէջ ունէր Մեծ Յարուցեալը, և ինքզինքնին կը կարեն կատարեալ ու ճշմարիտ կեանքէն, զերազոյն սէրէն, անտեսանելի բայց ապրող յոյսէն, աներենոյթ բայց ստոյգ իրերու ճանաչողութենէն։ Կենդանի բայց ողբալի այս մեռելները կը հաւատան միայն մահուան, և զայն իրենց կոնակը առած կ'ուզեն քալել կեանքի ճամբայէն։

Յարութեամբ եղած խոսածումը ապացոյց է թէ շարունակուող կեանքը որ պիտի անցնի մահուան փորձառութենէն, կրնայ շարունակուիլ մահէն անգին, և այդ նոր կեանքը վերջ չունի այլն։ Այս ամոքիչ մտածումին մէջ մահը կը դադրի ըլլալէ սոսկալի վերջը կեանքին, մութ պատը՝ որուն առջև կը վեր-

ջանային մեր երազներն ու իդաերը : Յարութեան հաւատքով ոչ միայն ապագայ մը կ'երեկի գերեզմանէն անդին, այլ նաև կայ հոն մեզի սպասող Մէկը, որ հոն զացած է այն ուղիէն՝ ուրկէ սլիտի անցնի մեզմէ իւրաքանչիւրը :

Յիսուսի Յարութիւնը այլաբանութիւն մը չէ, այլ իրականութիւն մը, որ պատռած է այլեւ մահուան վարագոյրը և միացուցած իրարու ընդմիշտ կեանքը անմահութեան և ժամանակաւորը անժամանակին : Քրիստոսի ճշմարիտ յարութիւնը իր Եկեղեցին է, անոր կազմակերպած քրիստոնէական կեանքը և անկէ ծնած տիեզերական քաղաքակրթութիւնը :

Մահը վերջակէտը չէ կեանքին, վերջին բառը իրեն չի պատկանիր : Քրիստոս իր մահուամբ յաղթեց մահուան : Խաչի յարգանքին մէջ, մենք կը ծնրադրենք ազատարար և յաղթական մահուան առջև որ այլակերպեց կեանքը : Ամբողջ զոյութիւնը այս աշխարհին պարտի անցնիլ մահէն և խաչի խորհուրդէն, ելլելու համար յարութեան և յաւիտենականութեան փառքին :

Յարութեան իրականութեան մէջ յաղթական նկատուած մահուան պարտութիւնը կը զգացուի . քանի որ մարդկային հոգին իր մէջ կը կրէ Աստուծոյ պատկերը, անիկա սահմանուած է վերածնելու ոչ թէ ժամանակին, այլ յաւիտենականութեան մէջ :

Յաւիտենական կեանքը մարդուն կարելի է և զոյութիւն ունի ո՛չ թէ իր հոգին բնութեանը պատճառաւ, այլ որովհետեւ Քրիստոս յարեաւ և յաղթեց աշխարհի մահացուցիչ ուժերուն . վասնզի տիեզերական հրաշքին մէջ Յարութեան իմաստը ուրիշ բան չէ եթէ ոչ իմաստին յաղթանակը իմաստ չեղող պարապին վրայ : Մահը լոււմն է արեգերքին, Յարութիւնը՝ անոր մշտնչենաւորումը : Առոր համար է որ Յարութեան Տօնը մշտանորոգ կեանքի մը խորհրդանշանն է մեզի համար : Հին աշխարհի հասկացողութեամբ՝ մարդուն և տիեզերքին ճակատազիրները բաժնուած էին . Յիսուսի Յարութեամբ անոնք կը միանան :

Մենք իբրև ազգ և Եկեղեցի, մասնակից եղած ենք իր մահուան, և կը հաւատանք մասնակից ըլլալ նաև իր Յարութեան : Ո՛չ մէկ ազգ պիտի կրնար մեզի չափի իրաւունքով ըսել Առաքեալին հետ . «Զշարչարանս Քրիստոսի ի մարմնի իմում կրեմ», ու չկայ նոյնպէս ժողովուրդ մը, որուն համար կարելի ըլլայ իրաւամբ ըսել . «Յոյս նոցա լի է անմահութեամբ» :

Ժողովուրդ Հայոց, զերեզմանի խորհուրդը տակաւին չէ մթազնած հոգիդ, հակառակ պատռուած կողերուդ և արցունքով լի աչքերուդ, որովհետեւ դուն կը հաւատաս, հաւատացեր ես միշտ, թէ մահէն անդին կայ Յարութեան ճշմարտութիւնն ու փառքը :

Գեղեցիկ ու սրտառուչ ըլլալէ աւելի բան մըն է խաչուած ժողովուրդներու ողբերգութեան տեսարանը զալիք յարութիւններու յոյսով :



Ա. ԳՐԱԿԱՆ**ՕՏԱՐԱԿԱՆԸ**

Օտարականին խօսքերն ու հրաշագործութիւնները տակաւ ուշագրաւ կը դառնային։ Հրեայ Եկեղեցին գժգոհ էր Գալիլիոյ իրադարձութիւններէն, իսկ քաղաքական իշխանութիւնները հեռաւոր կասկածներով կը նայէին Օտարականին, որ այնքան դիւրութեամբ կրնար խանդավառել բազմութիւնները։ Օտարականը կը զգար թէ իր շուրջը ամէն ինչ աչք ու ականջ կը դառնար և թէ յաճախ զի՞նքը ունկնդրելու կուգային մարդեր՝ որոնք ծանօթ էին իրենց ընկերային դիրքով։ Անդամանքով, ինչպէս նաև դիտուններով։

Ուռատափելու համար շատցող այս հետապնդումներէն, Օտարականը քանի մը աշոկերտներու հետ, հեռացաւ Գալիլիոյ սահմաններէն և գնաց Տիւրոսի և Սիդոնի կողմները։ Մատթէոսը գիտէր այս ճամբան, որուն մէկ ճիւղը կ'անցնէր Գալիլիոյ էնի հիւսիսէն, միանալու համար յետոյ արեւելքի մեծ ճամբուն։

Ճամբան կ'անցնէր լեռներու փէշներէն։ Չախին՝ կը տարածուէր Միջերկրականը իր կապոյտ ջուրերով։ Երկրի այս մասերուն վրայ աւելի զգալի կը թուէր Հռովմէացիններու ներկայութիւնը։ Կամուրջներ, նաւահանգիստներ և պահականոցներ իրարու կը յաջորդէին, զարմանքի մատնելու չափ աշակերտները։

Առաջին գիշերը անցուցին Տիւրոսի սահմաններու մօտ եղող գիւղի մը մէջ։ Յուղան որ ծանօթ էր այս վայրերուն, սկսաւ խօսիլ Տիւրոսի և Սիդոնի բարձր տուններու և ճոխութեան մասին, ինչպէս նաև անոնց փառաւոր և բարգաւած անցեալէն։ «Եղած է ժամանակ մը, ըստ Յուղան, որ այս տեղերը մեզի պատկանած են, սակայն մեր թագաւորները չեն կրցած իրենցը ընել աշխարհի այս գեղեցիկ մասերը։ Այժմ ի՞նչ ենք մենք, կամուրջ մը լոկ ազգերու միջև։

— Միայն Մեսիան կրնայ փրկել զմեզ մեր գարաւոր զերութենէն, ըստու Պետրոսը,

— Յարդ շատեր Մեսիայի անունով եկան, բայ Յուղան, բայց անոնցմէ ոչ մին կրցաւ փրկել իսրայէլը։

— Մերիններու օխալին պատճառու է որ Հռովմէացիք կ'իշխեն մեր վրայ, ըստ Մատթէոսը Նոյնիսկ այժմու այս վիճակին մէջ մեր առաջնորդները զիջումներու մէջ են Պիղատոսին հետ, այս վիրջինը կ'ուղէ որ մենք հետեւ Հռովմէական սովորութիւններուն, ընդունինք կայսրը իրեւ Աստուած և պաշտենք զայն։

Յանկարծ Յուղան ընդհատեց խօսակցութիւնը և գարձու Օտարականին։ «Տէր, ըստ, ե՞րբ է օրը թագաւորութեան, որու մասին կը խօսի, աղատագրելու զմեղ բոլորո այս գերութենէն։»

Օտարականը նայեցաւ Յուղային, խորունկ բայց գառն, յետոյ ըստ։ «Արքայութիւնը չի տրուիր այլ կ'առնուիր։ Իրական ոյժն ու արժանիքը վկայութեան և պաշտպանութեան պէտք չունին։ Օր պիտի գայ որ զուք առաջնորդներ պիտի ըլլուք մարդոց հոգիններուն, անոր համար ինչ որ կ'ըսեմ ձեզի մութին մէջ, տարեք գուլք զայն լոյսին, և ինչ որ կը մը միջնմձեր ականջներուն, յայտարարեցէք տանիքներէն։ Առանց հոգիի թագաւորութեան իրական ոչ մէկ ազտառութիւն գոյութիւն ունի։ Եթէ չէք փնտռեր հագիի թագաւորութիւնը, գացէք ձեր մեռեններուն քարայրները, ուր թագակիր գլուխները ժողովի են նստած։ Ճշմարտութիւնը պէտք չունի մեռելներէն յարգուելու։

«Առաջող որդերուն թիւը շատէ, բայց ես անոնց գէմ պատերազմ յայտարարելու չեմ եկած։ Գաճաճ մարդոց լէգէոնները զիս չեն սարսափեցներ, և ես պէտք չունիմ աղիւսէ պարիսպներու հորին թաքչելու։ Ան որուն թեերը ախեղերք մը կրնան գրկել, մետաղի փշրանքներէ շինուած թագերուն չի մատծեր։ Իմ թագաւորութիւնս այս աշխարհէն չէ, որովհետեւ գահն ձեր նախնիքներու սոկորներուն վրայ չէ հաստատուած։ Թող մեռելները թաղեն

իրենց մեռելները մինչև որ մայր հողը
յագնուոյ իր գառն պատղներավոց:

Ապա, դարձաւ Յաւզային և ըստ
շետիս զնա, ո՞յ մարդ, քու փնտուածդ
տեղ չունի իմ թագաւորութեանո մէջն:

Յետոյ ոտքի ելաւ, թօթուեց իր պատ-
մուճանի փոշին և գառնալով աշակերտ-
ներուն ըստ, բաւլինք, մութին չմասնք,
երանի անոնց որ լոյսին մէջէն զիտեն
քովելոց: Պետրոս և Յուլիոս կը քամէին իր
քովէն անխօսու:

Ուշ ատեն անոնք հասան զիւզը ուր
պիտի գիշերէին: Պետրոս հոն ծանօթ մը
ունէր, բալորը միտափին անոր տունը
գոցին: Տանուատէրը շատ գոհ մնաց ոյս
անակնկալէն, որովհետեւ շատ բաներ լսուծ
էր Օտարականի մասին և մեծ փափաք
ունէր զինքը ահանելու:

Առառուան գէմ հիւրընկալը յայտնեց
թէ ակացի յոյն կին մը կ'ուզէր ան-
պատճառ ահանել Օտարականը: Հազիւ ոյս
խօսքերը եղած, կինը ներս մտաւ, մօտե-
ցու որպագ Օտարականին և ծունկի հկառ
Անոր առջև: Երիտասարդ բայց որդե-
գոյն կին մըն էր հկողը, հոգին լիցուն
ցուով բայց նայուածքը՝ անձկաւթեամբ և
յոյսով:

— Տէր, ըստ Օտարականին, լսեցի
թէ Մարգարէ էք դուք, և հիւանդու-
թիւնները բուժելու շնորհը ունիք: Աղ-
ջիկս ասրիներէ ի վեր հիւանդ է, կը
պալատիմ որ գթաք ինծի և գաք բուժե-
լու զայն: Յետոյ սկսաւ բարձրածայն որ-
տառուել, և խսնաբհելով Օտարականի
ոտքերուն՝ համբուրեց զանոնք, իր զա-
ւակի օրբանին վրայ ծոռղ մօր մը
գուստնքով:

Օտարականը ժպտեցաւ, յետոյ ըստ
լուրջ եղանակով մը. «Բայց որքան ճիշդ
է արեհօք առնել մանուկներուն հացը և
տու զայն չուներուն»:

— Գիտեմ որ հրեայ ես, ըստ կինը,
և հրեաները կը մտածեն թէ միտյն իրենք
են Աստուայ որդիները: Յետոյ արցուն-
քոտ բայց ճառագայթուն աշքերով նայե-
ցաւ Օտարականին, ապա ըստ: «Բայց
չուներն ալ կը կշտանան սեղանէն աւել-
ցած փշրանքներով»:

Օտարականը զգացուած այս խօսքերէն,
մեղմօրէն զրաւ իր ձեռքը կնոջ ուսին,
ու ըստ: «Արժանի ևս գուն այն շնորհին
զոր կը խնդրես, գնու և ազջիկդ առող-
ջացած պիտի գտնեաւ: Կինը արտասուտ
գին, նորէն համբուրեց Օտարականին
ոտքը և երախտագէտ նայուածքքով մը իր
բարերարը դիտել յետոյ, հեռացաւ:

Յաջորդ օրը Օտարականն ու իր աշա-
կերաները շեղեցան Տիւրոս տանող ձամ-
բոյէն և գացին Պաղամայիս: Մովկերինոյ
այս քաղաքը լիցուն էր օտարականնե-
րով: Դիխտաւոր լիզուն յունարէն էր, կը
խօսուէր նոյնպէս տառերէն և փիւնի-
կերէն: Քաղաքին հրապարակը խռնուած
էր ուղտերով, ոչխարներով և զանազան
տեղերէ բերուած ամէն կարգի ապրանք-
ներով: Քաղաքի մուտքին բաղմաթիւ
գերիներ կ'աշխատէին, յորդարելու ձամ-
բան: Դէպի աջ, բարձունքի մը վրայ կը
բարձրանար Աստղիկի տաճարը: Օտարա-
կանը կեցաւ զիտելու տաճարն ու աղօթքի
նկողները: Յուղան կը գարմանար որ
Օտարականը այնքան անտարեր և խա-
ղաղօրէն կրնար զիտել սուար պաշտա-
մունքի այս տունը:

Մովխոսորչին մէջ բաղմաթիւ նաւեր
կային, մեծ ու զեղեցիկ, փիղի, առիւծի
և արծիւի պարանոցներով, իրենց վրայ
հրուիրելով Պետրոսին և միւս ձկնորո-
ներու նայուածքը: Օտարականը որևէ
բան չխօսեցաւ հոս, հակառակ որ արտ-
միրէն հասկցողներու թիւը շատ էր:

Հազիւ մօտեցած Լիբանանի մայրինե-
րու շուքին, ուրկէ Հերմոնը կը նոյէր
Յորդանանի աղքիւրներուն, անոնք վի-
րապարձոն և մտան ներդազի և Տանի
հողամասը: Երկիրը հօս ժայռոս էր և
անտպանով, հազարագէափորէն կարելի էր
ճամբորդներու հանդիպիլ:

Յաջորդ օրուան միջօրէին անոնք մօտ
էին արգէն Փիլիպիան կեսարիոյ, զոր
Փիլիպպոս արքոն շինած էր իր անու-
նով: Հսո էր այն նշանաւոր քարայրը
ուր Յոյները իրենց Պան տառուածը կը
պաշտէին: Բարձունքին վրայ կ'երեար
մարմարեայ շփեղ տաճարը, զոր Հերովդէս
Միծը կառոյց և նուրիեց Օդսասս կայսեր
պաշտամունքին:

երբ աշակերտները ճարտարապետկոմն այս հրաշալիքը գիտելով զբաղած էին, ըստ Օտարականը. օկեանքի մեծագոյն հրաշալիքը հոգին է, միտե գանձը զար ունի մորդը, արժէքը անցեալին և ապագային. Ամէն ինչ կետնքի մէջ կրնայ անցեալին պատկանի, բացի հոգին, որուն նետը ապագայի թէ՛ բաց և թէ գաց դրան ուղղաւած է:

«Եթէ հոգին կարենայ թօթափել նիւթին ծանը բեռը, այն ատեն մարդիկ աւելի մօտ պիտի ըլլան ինքինքնուն և իրենց եղբայրներուն Առանց հոգիի այդ ներկայաւթեան և ստեղծած մթնոլորտին, ոչ մէկ գեղեցիկ բան կարելի է սպասել մարդերէն և ժամանակէն: Ով որ իր մէջ չունի հոգեկան այդ անտեսանելի սկզբունքը, վաս հաղորդիչ մըն է նիւթին, կետնքին և մաքին հետ, մարդկային իղձերու և երազներու հետ Հոգին ծաղին է մարմնին:

«Վերստին կը ծնինք այն օրը երր կը զգանք հոգեկան այդ գարունը մեր մէջ: Այն ատեն կը գիտակցինք թէ առանձինն չինք երկնքին տակ և լուսուոր ձնոք մը մութէն գուրս կարկառուած՝ պատրաստ է մեզի պոշտպանելու:

«Ով որ սիրէ՝ կը լոյնէ իր հոգին երկնքին չափ և կը զգայ գեղեցկութիւնը աստղերուն և խօսուն լոռութիւնը գիշերուուն: Երբ կը սիրենք, մեր մտածումները կ'անցնին մեր հոգիին վրայէն, նման հրեշտակներու ճերմակ թեերուն: Սիրել աղատագրել է հոգին»:

IV.

Տիւրոտէ վերադարձին, Օտարականը փորձի ենթարկել ուզեց իր աշակերտները, զանոնք քարոզութեան զրկելով շրջակայ վայրերը: Կ'ուզէր վատան ըլլան անոնց նկատմամբ, որոնք օր մը իր խօսքը հեռուներ պիտի տանէին, իրագործելու երկնքի թագաւորութիւնը մորդոց սիրերու մէջ և այս աշխարհի վրայ:

Ճարտար երբ պատրոյդ ունի, կրնայ լուսուորել քարանձաւները: Շաճի հին սատը երբ վառած է, կրնայ լուսուորել ճողորհալներու ճամբան և վախցնել բարենիները: Օտարականը աշխարհի չա-

րիքին դէմ կ'ուզէր գործածել անզէն զինուորաները, մարդկարուն ցուցնելու գիրամարդկային յաղթութեան սքանչելիքը, հոգիին ոյժը որ գիտէ անկարելին կարելի ընել շատ յաճախ, պարտութեան մտանելու չափ իմացականութիւնն ու զիտաւթիւնը:

Օտարականը կը հաւատար թէ միամիտ պարզութիւնը զօրութիւն մըն է որ կրնայ յաղթել նենգութեան, խոնեմութիւնը՝ խորամանկութեան: Պարզութիւնն ու միամմութիւնը շատ յաճախ ունին ինքինքնին քնին արտայայտելու հնարքներ, գերազանցելու չափ հնարգիտութեան բալոր գիւտերը: Անոր համար կը զրկէ զանոնք իրեր և ոչխարներ զայլերու մէջ»:

Դրկուողները պարզ մարդեր էին, և կրնային առանց գժուարութեան ըլլան խօսութէն ինչպէս աշխարները, միամիտինչպէս աղանդիները և նոյն ատեն խորագէտ՝ ինչպէս օձերը: Ոչխարներ առկայն առանց վատաւթեան, աղանդիներ առանց յայրատութեան և օձեր առանց թայնի:

Կ'երթային կեանքի հացը բաշխելու արդորութեան քաղցը ունեցացներուն, հետեարար պէտք չունէին իրենց հետ աւնենալու պղինձ, արծաթ և ոսկի: Ոսկիին շողքը կը մեռցնէ արեին փայլքը, արծաթին փաղքը կը մոռցնէ առաջերուն պայծառութիւնը և պղնձին գոյնը՝ կրակին շողքը: Ով որ մետաղ ունի իր հետ, պարտական է երկրին և չի ճանչնուր երկինքը:

Աղքատութեան օէք քարոզողը պէտք է հոգիով, այսինքն հարուստ աղքատը եղած ըլլայ, երջանիկ թշուառը որ գիտէ գերէն նայիլ աշխարհի վառքիրուն:

«Ճուէք ամէն ինչ որ ունիք, ըստ էր անոնց Օտարականը, և մերժեցէք ընդունիլ որեէ բան: Թօթափեցէք նոյնիսկ ձեր կօշիկներու փոշին այն շնմներուն՝ որոնք պիտի մերժին ձեղի, իրեւ խորհրդանշական պատասխան իրենց հոգիի խլութեան և աղանձաթեան, ինչպէս նուև օր մը փոշի ըլլան և փոշի մը արժելու իրենց արժէքին»:

«Զարն ու անհաւատը, որոնց մէջ չ'այրիր մտածումին լոյսը, անհաւա-

պիտի ըլլան ճշմարտութիւնը ըստ արժանաւոյն գիմուսորին, Աղջմանաքի ամենէն խուզ դատաւարներն անգամ կը նոււճուին հաւատաւոր իսութի ապացոյցէն:

Եկթէ աշխարհի ձեր առըստ ճշմարտութիւնները սարսափեցնեն մարդերը և գանձնք մղեն վրէժինդրութեան ձեր նկատմամբ, մի՛ վախնաք, անոնք պիտի կրնան սպաննել միայն մարմինը ճշմարտութիւն ըսողին, բայց ոչ հոգին ճշմարտութեան, որովհետեւ մէկ մարմին մահէն հազարաւոր հոգիներ պիտի կրնան ծնիլ:

Գ.

Ամուս էր արդէն երբ քարոզելու դրկուած աշակերտները կախառնաւում վերադարձան: Յուղան առաջինն էր եկողներէն և սաւու Յուղան, քարոզեցի երկնքի արքայութեան մասին, սակայն ունկնդիրները Մեսիայի գուլստեան է որ կը սպասեն: Գալիլիոյ և իր շուրջի աշխարհամասերուն մէջ, մեր տեսածը թշուառութիւն և գերութիւն էր միայն: Հռովմը կ'իշխէ ամենուրեք, ինչպէս մեր մարմիններուն այնպէս ալ մեր հոգիներուն վրայ: Մեր առաջնորդները ծախսուած մարդեր են և օտարի աշքով կը նոյին մեր կորիքներուն և վէրքերուն: Միայն զուն կրնաս փրկել Խօրայէլը, ըստ Յուղան Օտարականին, ուշադիր գինքը դիտելէ վերջ:

Օտարականը յուղումով բայց շեշտակի նոյիցաւ Յուղային, յետոյ ըստ, և Անգամ մը ևս ունեցայ այդ փորձութիւնը, երբ ընդունեցի մարդերուն քարոզելու պատգամը: Երբ շուրջս նշմարեցի մարդեր, այնպէս ինչպէս որ էին անոնք, և սակայն պարտ էին ըլլան այնպէս՝ ինչպէս որ ևս կ'ուղէի որ անոնք ըլլային, Մարդեր ազատագրելէ առաջ պէտք է ազատել զիրենք այն կապանքներէն որոնք կ'արդիին որ անոնք ըլլան ազատ և երջանիկ, ունենալու համար հոգիներու խաղաղ թագուարութիւնը: Ազատութիւնը չի բերուիր մարդոց ոյժի և անգթութեան միջոցներով, որովհետեւ ով որ հոգ կը սերմանէ կը ստիպուի փոթորիկ հնձեւ:

ԵՅանուն ազատութեան խօսողները պէտք է մտածեն փաստերու փաստին, որ նուածումն է անբան տարրին, անտուն բնազդներուն, կոյր ուժերուն, մեր արտաքին աշխարհը, ինչպէս նու մեր ներքինը, իրազարծուած արիւնով մարդոց որդիներուն, անոնց որոնք ծնոն նողին հետ և հողին վրայ, ազատագրեցին շղթայակապ կենդանին անաւոր օրէնքներէն այս աշխարհին, և զրին հիմը մարդին, անով շարունակելու համար անդրոգոնին ճակատագիրներու հակոսակելու, որ հերքումն իսկ է մահուան, Գիտութիւնը չարիք մըն է, պատերազմը՝ ոճիր, վասնզի ան ամենէն անգութ յոյտնութիւնն է առելութեան՝ որ կ'որջանոյ և կ'եռայ մարդոց սիրտերուն մէջ: Պատերազմն ու առելութիւնը յոնցանքներ և պատիժներ են միանգամացյն:

«Պէտք է փոխել հին մարդը և ըլլալ նորը, արհամարնել կարենուուրու չափ բանութիւնն ու անիրաւութիւնը: Ուր մարդը, որդին երկնքին և եղբայրը բոլոր մարդերուն ան է, որուն լոյսն ու ոյժը իր ներսէն կուգայ, որ կը հաւատայթէ ուժի և բռնութեան աւերներու վրայ պիտի ծլի միշտ համեստ բռզրոջը հոգիներու խաղաղութեան և երջանկութեանց:

Քանի մը օրեր յետոյ վերադարձան Պետրոս և միւս աշակերտները: Բոլորն ու միծ խանգավառութեամբ կը խօսէին իրենց ունեցած յաջողութիւններէն: Օտարականը կը դիտէր զիրենք, իր ձագերուն թռչիւ սովորեցնող մայր թռչունի նման, և կը մտածէր բաներու որոնք կը ծուատէին իր միտքը: Կը զգար թէ աշակերտները տակութին անգատարաստ էին, կուզպ էր իրենց հոգին և անթափանց, և չէին կրնար ներս ընդունիլ իրենց վրայ ինկած լոյսին ճառագայթները: Արեւը տաքացացած էր զիրենք, բայց իրենք ի վիճակի չէին ցոլացնելու լոյսը: Անոնք կը շփոթէին Հրէաստանի վիճակը մարդկային ցեղի ճակատագրին և վախճանին հետ-

ի,

(Եարունակելի՝ 10)

ԿՐԹՆԱԿԱՆ

ԿԱՐՄՐԱՎԱՐԱԳՐ

Ժամանակին, երբ Աստուած ստեղծեց այս աշխարհը, ինչպէս նաև բոլոր կենդանիներն ու բոյսերը, անոնց իւրաքանչիւրին տուաւ առանձին անուններ։ Այդ օրերուն՝ անգամ մը երբ Տէրը իր Արքայութեանը մէջ նստած կը ներկէր իր ստեղծած փաքրիկ թաշուններու փիտուրները տեսակ տեսակ գոյներով, ճոխ ներկերով լիցուն իր երանգապանակէն, մտածեց շինել նուե փաքրիկ գորշ թաշուն մը, առանց որեւէ երանգի։ Աւարտելէ վերջ, ըստ թաշունին։ «Եիչէ թէ անունդ կարմրալանջ է»։ Յետոյ իր ափին առած, նետեց զոյն օդին մէջ։

Կարմրալանջը ուրախութեամբ թռաւ ու հեռացաւ։ Փորձելէ վերջ իր թերը և տեսնելէ յետոյ մտս մը այն գեղեցիկ աշխարհէն ուրե պիտի ամրէր, հետաքրքրութեամբ ուղեց գիտնալ թէ ինքը ինչի՞ կը նմանէր։ Ուշադրութեամբ ինքզինքը դիտելէ վերջ, նկատեց որ իր ամրողջ մարմինը գորշ էր։ Զհաւատալով աշքերուն, անգամ մը ևս գիտեց ինքզինքը ինչի հայելիին մէջ, և տեսաւ որ ոչ մէկ կարմիր փիտուր կար իր վրայ։ Յետոյ վրդոված, թռաւ Տիրոջ մօտ։

Ստեղծողը նստած էր հրաշագեղ գահի մը վրայ, ազանիներ իր ուսերուն, իսկ թիթեանիկները կը թռչտէին իր շուրջը։ Ոտքերուն ներքե աշխարհի Ստեղծողին, կը տարածուէր անսահման գորգ մը գոյնողոյն ծաղկիներէ կազմուած։

Փոքրիկ թաշունին սիրաը կը դոզար, ասկայն յաղթահարելով իր վախը, կրցաւ Տիրոջ մօտենալ և թառիլ Անոր ուսին։ Տէրը նշմարելով փոքրիկ թաշունը, հարցուց անոր թէ ի՞նչ կ'ուզէր։ «Կը փիտուրիմ Զեղի հարցում մը ընել միայն», ըստ փոքրիկ թաշունը, «կ'ուզէի գիտնալ թէ ինչո՞ւ կարմրալանջ կը կոչուիմ, երբ ամրողջովին գորշ եմ, և կտուցես մինչև պաշիս ծայրը չունիմ ոչ մէկ կարմիր փիտուր»։ Յետոյ նայեցաւ իր չուրջը

և տեսաւ Տիրոջ գահին մօտն ու հեռուն, Փասեաններ, ամբազչովին կարմիր և ոսկեգոյն, թռւթակներ, հրաշալի երանգներով, Աքազազներ, կարմիր կատարներով, Այաշտիններ և թիթեանիկներ, թաւելշով և ոսկեիփաշիավ օծուն, և բնականօքէն տարուեցաւ խորհելու թէ իր ուզածը կաթիլ մը կարմիր է միայն իր կուրծքին վրայ, որուն չնարհիւ ինք ևս գեղեցիկ պիտի ըլլար ու պիտի արդարացնէր իր անունը։ Անգամ մը ևս տիրօրէն նայեցաւ Աստուածայ և պատասխանի սպասեց։

— Օ, պպահիկ բարեկամս, ըստ Տէրը, հիմու միայն նշմարեցի որ մոռցած ևմ կարմիր ներկելու կուրծքիդ փիտի փիտուրները, սակայն համբերութիւն ունեցիր և պիտի ըլլայ ուզածդ։

Տէրը նայեցաւ կարմրալանջին և ժըպտեցաւ, իր ժագիտին մէջ հազիւ նշմարեկելի տիբութիւն մը կար սակայն։ Յետոյ ըստ Շես գիտեց կարմրալանջ անուանեցիր և ոյդ է քու անունը, բայց դուն պիտի հայթայթեա օր մը քու կարմիր փիտուրները։

Թռչունը Տիրոջ ձեռքի շարժումին վրայ նորէն թռաւ օդին մէջ։ Յետոյ սկսու մտածել թէ ինք, փոքր արարած մը, ի՞նչ կերպով կրնար կարմիր փիտուրներ հայթայթել իրեն համար։

Անհաշիւ տարիներ իրարու յաջորդեցին։ Մարդերը բազմացան և յառաջդիմեցին կեանքի բոլոր մարդերուն մէջ։ Սորվեցան մշակել հաղը և նուռարկել ծովուն վրայ։ Սորվեցան կարել ու հագնիւ զանազան կարգի զգեստներ և գործածել թանկացին զարդեր։ Ծինեցին հայակապ քաղաքներ, բայց մանուանդ տաճարներ, Եգիպտասուի, Հռոմի և Երուասղէմի մէջ։

Այս շրջանին նոր օր մը ծագեցաւ, մէկը այն օրերէն զոր երկար տահն պիտի յիշուի աշխարհի պատմութեանը մէջ։ Այդ օրուան տառան, Կարմրալանջը նստած էր մերկ բլուրի մը վրայ, որ կը գտնուէր Երաւասղէմի պարիսպներէն դուրս և կ'երգէր իր ձագերուն համար, որոնք կը հանգչէին թաւուտքին խորը շինուած աղուոր բոյնի մը մէջ։

Կարմրալանջը կը պատմէր իր ձագերուն ստեղծագործութեան հրաշալի օրերու մասին, թէ ինչպէս Տէրը ստեղծելէ

զերջ աշխարհի բոլոր արարածները, իւրաքանչիւրին չնսրնած էր իրեն յատակ անունը: Յետոյ տիրութեամբ կը վերջացնէր պատմութիւնը, թէ երկար տարիներ անցած էին այդ յիշատակելի օրէն ի վեր, բազմաթիւ գոյնզգոյն և գեղեցիկ թռչուններ դուրս եկած էին իրենց հուկիթներէն և կարմիր վարդեր բացուած որեւին տակ, սակայն կարմրաւանջը կը մնար միշտ նոյն գորշ թռչունը, առանց կարմիր փետուրներու:

Զագերը լսելէ վերջ այս պատմութիւնը նախ տիրութեամբ իրարու նայեցան, յետոյ բանալով իրենց աղուորիկ կտուցները, միաբերան ըսին իրենց մօրը՝ թէ արդեօք իրենց նախնիքը ժամանակի ընթացքին ըրազ էին անհրաժեշտը, կարենալ ունենալու համար այդ թանկագին կարմիրը:

— Մենք բոլորս ալ ըրած ենք մեր լուսպայնը, սակայն անօգուտ: Առաջին կարմրաւանջը անդամ մը հանդիպեցաւ իրեն նման ուրիշ թռչունի մը, և զայն սիրեց ուժգնորէն, իր սիրու այրելու տատիճուն: Պահ մը տարուեցաւ մտածելու թէ Տիրոջ նպատակն էր եղած որ ինքը ույնքան ջերմօրէն սիրէր, որ իր սրտի տաքութենէն կուրծքը կարմրէր, բայց անօգուտ: Իր յաջորդներն ալ նոյնը փորձեցին և ձախողեցան, բնական է որ դուք ալ պիտի ձախողիք անխուսափելիօրէն:

Փոքրիկ ձագերը շատ տիրեցան իրենց մօրը ըրած այս պատմութենէն, ցաւելով որ այդ գեղեցիկ կարմիրը պիտի չդարգունարկու նորաբոյս փետուրներով ծածկուած իրենց գորշ լանջքը:

— Մենք տակաւին կը յաւսայինք թէ երդը պիտի օդնէր մեզի, ըստ մայրը: Երկրորդ կարմրաւանջը երգեց, մինչև որ իր սիրու հալեցաւ: Ան կը կարծէր թէ երդին կրակը, որ իր սրտին մէջն էր, կարմիրով պիտի ներկէր իր կուրծքին փետուրները:

— Մենք կարմրաւանջերս յայտնի ենք նաև մեր քաջութեամբ և արժանիքներով, բայց թռչունը երրորդ սերունդին առանգ կանող կարմրաւանջը քաջութեամբ կը ուած է միւս թռչուններու հետ, բացավառելով իր սիրու յաղթանակի հպար-

տութեամբ, մտածելով թէ իր կուրծքին փետուրները կը նային կարմրիլ պայքարի կրոկէն, որ կ'այրէր իր հոգիին մէջ: Սակայն մեր բոլոր նախահայրերը վրիպեպեցան իրենց կարմրին իշնչ կը նային ընկել, անսնք փորձեցին կեանքի լուսպոյն բաները, սէր, երգ և պայքարը:

Մայր կարմրաւանջը սակայն յանկարծ կեցուց իր խօսակցութիւնը, որովհետեւ երուսաղէմի դուռներէն մէկէն մնձ բազմութեամբ թափօր մը դուրս կ'ելլէր ու կը դիմէր գէպի այն բլուրը, ուր կարմրաւանջը բայցնը կար: Կային հնձեալները, ամենի ձիերու վրայ, զինուորները, երկար նիզակներով, և զանիճները, մուրճերով և քամներով: Թափօրին մէջ կը նշմարուէին կղերականները, դատաւորները, լոցող կիներ և ապա յիմարացած ամբոխ մը՝ որ կը կանչուըստէր, ինքն իր վրայ գուլարուելով:

Կարմրաւանջը իր բոյնի եղերքը նըստած սկսու գողալ, վախնաւով որ թաւուը, որուն մէջ իր բոյնը կար, կախան կը դառնայ և իր պղտիկները կը մհանին:

— Ուշագրութիւն, ըստ իր անպաշտպան ձագերուն, քովքովի եկէք և մնացէք խաղաղ, անա մեզի կը մօտենայ ձիաւոր մը, ինչպէս նաև զինուոր մը՝ հմգած երկար ներքաններով սանդալները: Հաս կը դիմէ նաև փոթորքկայայդ ամբոխը: Յետոյ բնազդօրէն տուրածեց թեերը իր ձագերուն վրայ:

— Ո՞հ, սարսափելի է տեսաբանը, ըստ իր ձագերուն, հս չիմ ուզեր որ դուք վկաները ըլլաք այս տրամութեանը երկք դատապարտեալներ կան, որոնք խաչուելու կը բերուին: Յետոյ աւելի տարածեց իր թեերը որպէսզի պղտիկները չկարենան բան մը տեսնել:

Զագերը կը լսէին միայն մուրճի հարուածներուն ձայնը, աղաղակները միանողներուն, և ոռնոցը վայրի տմբուխին: Կարմրաւանջը կը հետեւէր տմբուղ տեսարանին, որ սոսկում կ'արթէր իրեն, և չէր կրնար վերցնել իր նայուածքը երեք դժբախտներէն:

— Որքան անգութ են այս մարդերը, կը մտածէր կարմրաւանջը, չի բաւեր որ

խոչերու վրայ գտնուեմ են այս խեղճ
արարածները, ահա անոնցմէ մէկի գըլ-
խուն կը զետեղեն նաև փուշէ պատկ մը,
փուշերը արդէն վիրաւորոծ են իր ճա-
կատը և արիւն կը հասի Սակայն որքա՞ն
գեղեցիկ է ան, և որքա՞ն խաղաղ ու
քաղցր գէմք ունի Սիրաս կտոր կտոր
կը լլայ երբ կը նայիմ իրեն:

Կարմրաւանջին գութը տակաւ կը շատ-
նար գլխուն փշեպսակ ունեցողին նկատ-
մամբ: «Ա՞ն, իցիւ թէ եղբօրս արծիւին
պէս զարաւոր ըլլայի, պիտի երթայի խլիւ
զինք արիւնող գամերը և մազիլներով»
պիտի հեռացնէի զինք նեղողները: Փաք-
րիկ թռչունը ա՛ւ չկրցաւ գիմանաւ, երբ
տեսաւ շատցաղ արիւնը փշեպսակ կրսդի
գէմքին վրայ: «Թէկ փոքք և տկար,
բայց կրնամ օգտակար ըլլաւ այս տա-
ռապեսլին: Յետոյ երաւ իր բոյնէն և
թռաւ օդին մէջ: Փորձեց մօտենաւ մէջ-
տեղի խաչուղին, լայն թռիչքներ գոր-
ծելով անոր շուրջը: Սկիզբները շատ գըլ-
ուար եղաւ մօտենաւ, տակայն տակաւ քա-
ջութիւն առաւ, մօտենաւ և իր պղտիկ
կտուցով գուրս քաշեց փուշ մը՝ որ սկսած
էր վիրաւորել խաչուղին ճակատը: Այս
միջոցին խաչեալի գէմքէն իր կուրծքին
վրայ ինկաւ արեան կաթիլ մը, տարած-
ուեցաւ և գունաւորեց փոքրիկ թռչունին
աղուոր լանջքը:

Երբ մայր Կարմրաւանջը իր բոյնը
վիրագարձաւ, փոքրիկները սկսան ուրա-
խութեամբ աղաղակել թէ իր կուրծքը
կարմիր էր, վարդերէն աւելի գեղեցիկ
գոյնով:

— Կաթիլ մը արիւն է միայն, խեղճ
մարդու ճակատէն կուրծքիս ինկած, ըստ
թռչունը, վաղը կ'անհնետանոյ, երբ լուսց-
ուիմ առուակի կամ լճակի մը մէջ:

Սակայն կարմիրը չանհնետացաւ, երբ
թռչունը օրեր յետոյ լուսց ինքինքը
մօտակայ ջուրերուն մէջ: Ընդհակառակն,
երբ պղտիկներն աւ մնեցան, արեան այդ
կաթիւը շողաց անոնց աւ կուրծքիրուն
վրայ, ինչպէս որ ան կը շողաց բոլոր
Կարմրաւանջերու կուրծքին, այն օրէն ի
վեր:

Ահա թէ ուրկէ առաւ Կարմրաւանջը իր
կուրծքին կարմիրը:

Ս. Հ.

ՍՊԱՌՈՒՐ

Դեռ կը սպասեմ օրերուն լաւ,
Սրբաներուն՝ օրինեալ, պայծառ,
Խոսումներուն դեռ անվիճակ,
Հոգիս ըրած մութ հայելի,
Տարիներուն անհիւրնելալ:

Կանցնին օրերն ու ամիսներ,
Սննօրութիւնն նախատինք է,
Կարաւանին նրման անձայն,
Ա՞լ է փըշեր անիւն անհուն
Ժամանակին,
Ճամբաներուն վրայ մըրին:

Դեռ կը սպասեմ բզգալով թէ,
Անզօրութիւնն նախատինք է,
Աժին միայն հաւատացող
Մարդոց համար:

Լուսինն արձար դազաղ մ' ինչպէս
Հորիզոնն ամէն զիշեր
Կը բարձրանայ փոսփորափայլ:

Դեռ կը սպասեմ,
Մինչ ծիլ ու ծառ, զաւ և անսառ,
Գարնան շունչով
Կը սարսրան ու կը ծաղիին,
Բնուրինն ամբողջ կը ծոցուորի,
Գովէ մ' անհուն ու բեղմնաւոր,
Գարերն անգամ կը կայծկրլան
Ադամանդէ ծիծաղներով:
Բայց հոգոյս խոր վիւսն է նրսեր,
Վըշան ինչպէս վաշկատոնին,
Աւազներուն՝ արեւախան:

Դուրս ու հեռուն,
Ժրիուր մարդոց, ժրեցանի ու բոյն,
Արլավ սրլավ, սիւսն ծակող:
Բայց կը սպասեմ ես օրերուն
Վաղուան ծագող,
Երկարելով սրտիս բաժակն
Եր զինիին ոսկիափայլ,
Առուն կարօն ունին այնիան
Երբներ այսօր:

1957, Ամման

Վ. Տ. Մ. Ա. Ն. Դ. Ի.

Ա Ն Մ Ա Ն Ո Ր • ՏԵՍԻԼ Ք Ը

.... Եւ նոցա բացան աչք եւ ծանեան զնա, եւ նա
եղեւ ի նոցանէ աներեւոյք : (ՂԿՍ. ԻԴ. 31):

**Լուսաբնակ բարեկամին՝
Թարգոմ՝ Պատրիարքի անկուռ յիշատակին :**

Յոզնած՝ անոնք լուռ կ'երթային,
Երբ երազ մը եթերային
Կեցուց զանոնք, ու լու ի լու՝
Աստուածային սուրբ այցելու,
Հարցուց անոնց. «Ե՞նչ զիտէին
Մասին այն մեն՝ Մարգարէին,
Որ քիչ օրեր առաջ, հեռուն,
Հոգին տոււաւ դէմն աստղերուն»:
— «Աչինչ». ըսին, ու գայթ ի գայթ,
Անտեսելով Լոյսն ձառագայթ,
Քայլերն իրենց ուղղեցին հոն.
Ուր կը բացուէր մութ հորիզոն
Միիրենց տրտում նայուածքին դէմ,
Մինչ ասդին՝ վառ երազ մ'եղեմ
Կ'արփաւետէր անոնց հոգին
Յառնող Լոյսի շողով մ'անգին:
— Լաւ. ըսէ՛ք ինձ. ի՞նչ ըսին ծեզ,
Հոգիներն այն բարի ու հեզ,
Մարգուն համար, որուն մասին
Կասկածներ ծեր շրթանց կասին:
Հսի՞ն թէ Ան՝ թագաւոր հեզ,
Վրան չառաւ երբեք քեհեզ,
Ո՞չ ալ երկրի ծիրանին բորք
Մածկեց կորած բամակն իր որք:
Հսի՞ն թէ Ան՝ Թափոր լերան
Ամպերուն մէջ լուսածորան
Շողեր հազաւ վարդ ու լոյսի,
Մինչ մարգարէք զոյք՝ մեկուսի
Անոր շրթանց աղբերակէն
Կ'ըմպէին Լոյսն իր բուն ակէն:
Հսի՞ն թէ Ան՝ ծովամբրկին
Սանծեց զայրոյթն զոռ, մոլեզին,
Ու ալեաց վրայ բայլով տատան
Փրկեց աշխարհն ու իր տապան:
— «Անորոց ու տարտամ բաներ
Մանոր մասին լըսեցինք, Տէ՛ր»,
Հսին ճամբորդքն այն երկորին,
Որ տրտմասուգ իրենց հոգին
Շալկած՝ դէմի սարակներուն
Կը նայէին լուռ, մոլորուն.
Մինչ արեւն ալ իր՝ կնամըստին
Քեքած՝ կուտար իր շունչն յետին:

— Հսի՞ն թէ Ան՝ Սիրոյ Գիրքին
Բացաւ էջը սարսըռազին.
Ու կըտակեց մարդկութեան նէք
Իրեւ Խորհուրդ՝ հացն իր օթեկ,
Եւ գինին ալ իր սուրբ Արեան
Փոխան տոււաւ, որ արքենան:
Հսի՞ն թէ Ան՝ մութ զիշերին,
Իր երազին տալով մարմին,
Վեհաանդորր բայլերով գայթ,
Իրեւ սիրոյ Լոյս ձառագայթ.
Վերնատունէն իջաւ Կեղրոն,
Գիբասմանին գտնելու հոն,
Անոր թաւուտ ձառերուն տակ
Ըմպելու հուսկ մահու բաժակ
Հօրը ծեռքէն, որ երկինքէն,
Մութ նայուածքով մը ապարէն,
Որդւոյն ճակտին՝ լուռ, մեկուսի,
Դրաւ ճամբորյն Սիրոյ, Յոյսի,
Ու Յարութեան միացումին,
Որ օր մ'իրար միածուլուին:
Հսի՞ն թէ Ան՝ պիղծ ճամբորյին
Փոխան՝ բացաւ աչքը կոյրին,
Աննենգ սիրով բարեկամին
Հացաւ մահն ու հազցուց մարմին:
Թէ՛ ականջէն վատ Մաղթոսի
Զթողուց օր արիւն հոսի.
Սաստելով Վէմն ու անոր սուր,
Զարցնկալու ունկան ի լուր:
Հսի՞ն թէ Ան՝ վերասլացմամբ
Պատուելով օր մ'երկինք ու ամպ,
Ինքն՝ իր ևաշին, ծեզ՝ իր կրծոց
Վըրայ սեղմած՝ Վէս Տիգախոց,
Պիտի երթայ, ու ետ՝ առ ծեզ
Դառնայ նորէն աղաւնոյ պէս
Հանգչիլ կրկին այն սեղանին
Ուր գուք գտաք ըսպեղանին
Հաց ու զիււոյ այն կենսառողջ,
Որ ծեզ Յոյսին կապեց ամբո՞զք:

* *

Գողգոթային մինչ բացուէր զիր,
Հաւատքի շող մը երկնածիր


ՊԱՏԱՍԽԱՆ

Սուտին բով ու Զարին,
Կայ եւ ձիւզն ու Բարին,
Կայ եւ Սէրը մաքուր,
Եւ Գուրը իրեւ նոյր,
(Մարմնացած զըւարբուն)
Հիւանդին վրայ հակած,
Կայ Մայրը մըշարբուն
Խնչպէս վարդ մը ծաղկած
Մանուկի մ' սընարին:
Ո.մէն ինչ, ձիւզն ու Սուտին,
Բարին, Զարին, Սէրն ու Գուրն
Նոյն ակէն կը ծագին,
Կը դառնան նոյն ակին:

ՔԱՌԵԱԿ

Ի՞նչ լաւ է այսպէս յաւիտենական
Քունէն արքըննալ,
Ուեւուն նայիլ, սիրով հըմայուիլ,
Այրիլ, մոխրանալ:

Մ. ՄԱՆՈՒԿԻԵՍՆ



Բացաւ անոնց ականողիք.

Հոն կաթեցուց պուտ մը երկինք:

Գիտին ինկան, երկրպաղին

Ոյդ Անձանօթ միծ Տեսիլքին:

Ակնարկներով աղերսարկու՝

Մէկը՝ Անոր, միւսն՝ իրարու.

— «Տէ՛ր, նին փառացդ նոր ծործով նիր

Դու այս զիշեր առ մե՛զ ազիլ»:

* * *

Իսկ սնձանօթն՝ եթերայա՛ծ

Թեւեր առաւ վերասրլաց.

Անոնց թողլով ողջոյնն յիտին,

Որ իր մասին ա՛լ չերկմտին:

ՀՄԱՅԻԼ ԳՐԱՎԱՆ

(Պէտոք, Ապրիլ 1962)

Կ Ո Ւ Զ Ա Տ Զ Ա Ս Գ Ո Ւ Ն Ձ

Կու զայ զարունը նորէն, մեղմիկ, անոյօ ժպիտով,
Եր զայուսէն կը խայտան դաւ ու անտառ, լեռ ու ծով.
Կու զայ զարունը խինդով, ծափով, վիճով, ծաղիկով,
Ցուրտ մահէն եսք նոր կեանիքի արեւափառ պատգամով:

Կու զայ զարունը երգով, այլակերպիչ իր ոյժով.
Հին երազներ, տեսլիներ, բարուն իղձեր բոլլերած,
Եր սրինգէն կը յառնեն, մեզ կը զինեն նոր յոյզով.
Մերեր նոյնիսկ, նիւանդներ՝ ժամանակէն հարուածուած,

Կեանիքն հետ վառ, նորոգուող, ա՛լ կը կնիւն նոր զաշինք.
Մահը նահանցն իր կ'ապրի հոգիին մէջ ամենուն.
Վարը՝ երկիրն՝ նախուն զորգ, վերը՝ կապոյս է երկիրնեն:

Օ՛, մտածումը դաժան, ուր զարիան ուրիշը բեղուն
Չկարենայ ծաղկեցնել ո՛չ մէկ երազ ինձամէ ներս,
Պատկերին դէմ այս յուղիչ՝ ի՞նչպէս զափիմ արցունեներու:

Ծ Ա Զ Վ Ա Ճ Ա Ն Ա Զ Ջ Ր Ե Վ

Կը կարծէի ես երեմն թէ իրի մեղքեր ունէի,
Մեղքներ՝ թերեւ, աննեան, մեղքներ՝ զիւրան բանելի.
Թէ բանի որ մարդասպան, զող, անհաւաս մը չէի,
Ես մօս էի Ասուծոյ շատերէն բայլ մ'աւելի:

Աւ փեացած, իննազո՞ն, յանձնապատաճ ու յախուռն,
Զէի բառուեր ևս յանախ տարքեր մեղքի մէջ խրած
Խմ ընկերներս ձաղիելէ, ու վեներէ կրոս, բռուն,
Տալէ առիր կրօնական ելոյթներով անզզած:

Մակայն այսօր, ո՛վ Ասուած, զերք աբեղայ նորքիծայ,
Ես ըրի ուխս մը անձայն, ուխս՝ բանելու յանցանեներս,
Երք բաշութիւնն ունեցայ չե՛ս նայելու որտես ներս.

Ուր սոսկումով ես տեսայ ի՞նչ արարքներ սեւաբոյր,
Արոնց համար զգումի չիր մ' խոկ արցունիք չունեցայ,
Ի՞նչ է հոգիս երէ ոչ մեղքի անօթ զարքարոյր:

Գ. Ճ Ո Ր Ց Ա Բ

Մ Ա Ր Գ Բ .

Ո՞վ մարդ, իշխան ցամաքի ու ծովերու, խուզարկու անչափիլի խորութիւններու ու անհասանելի բարձունքներու, ընդունաբան ամպարագիծ ատելութեանց ու տնպարփակելի սէրերու, ի՞նչպէս սղբամ անկումդ ամօթալի, նուսաստացումդ եղկելի, գայթումդ ահռելի, աայթաքումդ անդոհալի:

Դուն՝ որ քեզմէ ներս կը կրես կայձը անմահութեան, որ զօրութեամբը մաքիդ կը ճախրիս երկնոյին ոլորտները ամպածրար, որ հաւատքիդ ոյժովը կը տեղափոխիս լիռները ամրախարիսխ, ինկած ևս այսօր կոչումիդ բարձրութենէն ու մեղքի բիրտ ու բգքատիչ ճիրաններուն մէջ կը հեծեծես յուսակորոյս:

Դուն՝ որ առանձնաշնորհումը ունիս տէրն ու իշխաղը ըլլալու բալոր շնչաւոր ու անշունչ էտկներուն, այսօր գերին ևս քու ձեռքերովդ լոյս աշխարհ բերուած ու ձեւաւրուած նիւթին ու մետաղին, իրենց գոյութիւնը քու հանճարիդ պարտական մեքենային ու արօմին:

Ո՞վ մարդ, խորամանկ՝ բայց նոյն տանն արգահատիլիօրէն միամիտ, յուսավառ ու յուսախար միտնգումայն, խոլացի-խենթ, համագրաւթիւն սեի ու ճերմակի, լոյսի ու խուարի, գեղեցկութեան ու տղեզութեան, ազրիւր՝ անոյշ ու լեզի ջուրերու, փոտարանութեան ու անէծքի: Հոդիդ՝ սիրոյ ու տեղելութեան հնաց մը փախն ի փոխ, կրկէս մը հակադիր ու իրերամերժ ոյժերու պայքարին, ոյժեր հակամարտ՝ սրոնցմէ մէկը միտյն սահմանուած էր տէրն ու տիրականը, անական բնուկիչը ըլլալու սրտիդ, իրուունքո՞վ բազմելու անոր գահին վրայ, բայց որուն գահընեկց ըրիր անմտօրէն, ու անսամօթարար ներս հրաւիրեցիր միւս ոյժը, սրուն պերձագեղ անուններ ճարելու մէջ հղար ա'յնքան շոայլ ու անոնցմով զայն մկրտելու մէջ ա'յնքան ճարտար: Չուզեցիր, առաւելագոյն պարտգոյին՝ չկրցար արգիւր անոր մուտքը հոգեկան աշխարհէդ ներս, ու ատիկա կու գոր առաջինին յաղ-

թանակին նկատմամբ ունեցած հաւատքիդ պակասէն, անոր կեանքիդ մէջ դրական ու ներգործող ոյժ մը ըլլալու հանդէպ ունեցած քու տարակոյսէն: Լաւագոյն պարագային՝ ուզեցիր ծառայել երկուքին ալ նոյն հաւատարմութեամբ, բայց անկարելին փորձած ըլլալու գիտակութիւնդ, որ չուշացաւ, չկրցաւ քեզ զգասաւթեան հրաւիրել:

Ինչո՞ւ անզօր ևս այսաքան կիրքերուդ տոջե, ինչո՞ւ գերին ևս դարձեր բնազդներուդ կործանամէտ, ինչո՞ւ ստրուկն ևս հակումներուդ վայրաքարչ, ինչո՞ւ բաղմազան մոլութեանց ամբակուռ չղթաներով կաչկանդած ևս հադիիդ թռիչքը լուստթե, զղացումներուդ ճախրանքը վեհափառ, մտածումներուդ խոյանքը բերկրապարգե: Ինչո՞ւ վախի և անսառութեան ստրափն է տիրական խորը աչքերուդ, փոխան սիրոյ կայծին, անդորրասւթեան պայծառ երանգին, վատահութեան ու գոհանակութեան արփիաչաղ շառայլին:

Ո՞վ մարդ, կ'արգոհատիմ քու վրադ, որովհետեւ մուցար Տէրդ ու Արտիչդ, ու գուն քեզ տէր կարծեցիր անձիդ ու աշխարհին:

Հասար երբիմն երանութեան լերան կատարին, բայց չկրցար երկարօրէն մնալ հսն, որովհետեւ եղար անմիտ այդ երանութենէն ուրիշին բաժին չհաննելու, զոյն տուանձին ըմբոչխնել ուզելու աստիճան, ու անխիղձ՝ հրել գլուռելու չափ այդ կատարին մօտենալու յանդգնութիւնը ունեցող եղբայրներդ:

Ճգնեցար շարունակ քակիւլու հանգոյցները տիկեցիրական մէծ խորհուրդին, կեանքի՛ խորհուրդին, մահուան խորհուրդին: Ու տրամեցար, անհունօրէն տրամեցար երբ գտար մտքիդ զօրութիւնը սուհմանափակ, անտառակ, տնկարող թափանցելու տիկեցիրքը վարող մէծ օրէնքներու գաղտնիքին, ու կատաղութեանդ մէջ անզօր՝ բացիր բերանդ անէծքով ու հոյնոյանքով, մարգերանդէմ, աշխարհի գէմ, անոր կարգուատրքը տնօրին ոչ մէծ ու անյայտ Ոյժին գէմ:

Ուզեցիր բնու չծարուիլ, ու մերժած եղար ուրախութիւնը զավ ազրիւրէ մը իր պապակը յագեցնող ճամբորդին: Ուզեցիր

երբեք փուշը ու փոթորիկի չհանդիպիլ, ու չկրցար ժպահիլ ձմբան ամմայութենէն ետք ծաղկող դաշտերուն ու գարնան կինսապարզե ու ժպահուն արեգակին։ Հեռու փախար գիշերուան աղջամուղջէն, ու զրկուեցար վարդահեղին արշալոյցներու քաղցրութիւնը վայերիլու երանութենէն։

Զգիացար թէ մէկ բարի գործդ, մէկ սփոփիչ խօսքդ, մէկ աղու ժպահու, մէկ սրտարուխ աղօթքդ ու մէկ աղնիւ տենչդ շատ ուելի կը կըսէին Ասոււծոյ արդար նժարին մէջ քան թաներով սոկի ու արծաթ, մարգրիտ ու չափիւզայ. շատ աւելի համելի են Տիրոջ, քան լիտրերով կնդրուկ ու զմուսու, ստաշխ ու կինամոն. ու շատ աւելի կը մեծցնեն քեզ քան տասնեակներով զովիստ ու տիազաս։

* * *

Սթափէ՛, ո՛վ մարդ, ու թսդ կետնքը ըլլայ քեզի համար նախադուռը անմահութեան. ժպահէ՛, ու թող մեր զեհենակերպ մարտակը աւայ քեզի նախաճաշակը Եգեմին, որուն կորուստին կոկիծ շուքիդ պէս անբաժան մետց քեզմէ՛, որուն վերադիւտին յոյսը նախաճակակէտդ եղաւ յաճախ և որուն ցանկալի կեանքին վերատիրանալու տենչը տիրապետող եղաւ ստէպ զգացումներուդ աշխարհին վրայ, Արցունքներովդ մարդէ գարչ ու զորչ մեղքերով բծաւորուած կառւը քու հոգիիդ, ու անոր բիւրեղային թափանցկութենէն գիտէ փառքը զալոց օրերուն, որ պիտի կերտուի քո՛ւ իսկ ձեռքալզի։

Սթափէ՛, ո՛վ մարդ, ու ամէն կական ու թառանչ թող վերածուի երգի ու ծիծաղի, ամէն կոծ ու ոզր դառնայ մեղեղի հոգեզուարձ ու քաղցրահնչիւն, ատելավագու ու թռւնածէտ ամէն հայեացք փոխակերպուի սիրազորով ու լուսարուխժպիտի

Սթափէ ու փրկէ հոգիդ. անկորնչելի մասն է ան քու էութեանդ. ջանա՞ փրկել զայն, գանձդ մնայուն ու անփոխարինելի, գիտցիր գուրգուրաւ վրան ամէն վայրեան։

Սթափէ՛, ո՛վ մարդ, զգաստացիր, անսած ես եղերքը անդունդի մը՝ խոր ու անաւոր. փոքրիկ սայթաքսւմ մը՝ ու անխուսափելի է անկումդ, անկանգնելի

գլորումդ, անվերտագործ անհետացումդ այս ժպահչող ու գեղածիծաղ մոլորակի երեսէն։

Բայց վերցո՛ւր հայեացքդ դէպի երկինք, հուսատա՛, երանելի քու նոխնիքներութ նման, թէ ամենայն տուրք բարիք և ամենայն պարզեք ի վերուած են իջեալ, ազատագրէ՛ եսդ մեղքի ու մութեանց կապանքներէն, ամենէն խիստ բանատիրութեան վզիկ անցուցած չղթաներէն ու րիբա ու անտպարոյն, ոին ու անցաւոր փառքի մը կամ ափ մը հազի համար եղրօրդ հետ պայքարելէ տառչ մաքառէ՛ հոգիկ իրենց անարգ ու գաման բանակալութեանը տակ պահող, զայն ցեցի պէս մաշող ու եղծանող ժխտական ոյժերուն հետ, ու պիտի իրենց խազաղ լուծումը գտնեն առջեղ դրաւած բուրք այն հարցերը՝ որոնց լուծման համար արիւնանեղութիւնը կը նկատէիր հարկաւոր. ու պիտի զգաս գուն քեզ յոզդթանակի գինիսովը արրշիա ու կենսախայտ, ու երջանկութիւնը պիտի ըլլայ անհամեմատորէն մեծ ու անխառն՝ քան երջանկութիւնը աշխարհնը նուաճող ծիրանափառ կայսրերուն. վասնզի գուն նուաճոծ պիտի ըլլաս քո՞ւ իսկ փոքրիկ աինդերքդ, զայն խովազ Զարումքը՝ աւելի ճիշդ, ու պիտի ըլլանես գաղանիքը ըլլալու հաշտ ինքինքի հետ, ընդգէմ խոռվակոծ աշխարհի մը սասանեցուցիչ վերիվայրումներուն. Նուաճոծ պիտի ըլլաս կամչոտ ու պիտի ըլլաս կամչութիւնը, ամբողջական ու յաւերժատեն, զարայս աշխարհի զօրութիւններէն ո՛չ մէկը ո՛չ մէկ ատեն պիտի կրնայ քեզ պարզեւել. ոչ ու, զայն ձեռք ձեռէլէդ ետք, հակառակ կամքիդ, քեզմէ տանել. Ու ոյս բուրովը ու այս բուրովէն ետք, ապահոված պիտի ըլլաս քեզի երանութիւն մը անանց ու անվախճան, իսկ այս վշտահնեց մոլորակին՝ արշալոյս մը անսախընթաց, արշալոյս մը պայծառ ու անշամանդաց։

Գէմբրդ Ա. ՃԻՆԻՎԻԶԵԱՆ

ԲԸՆԵՍՄԻՐԱԿԱՆ

ԱՏԵՓԱՆՈՍ ԳՈՅՆԵՐԵՐԻ ՑԱՆՑ

(1250? - 1315?)

Կիլիկիոյ, յատկապէս Ակեռայ վանքին
մէջ ծաղկող նշանաւոր Գրիչներէն մին է
Ստեփանոս Քահն. Գոյներերիցանց կայ-
թառ օնցի կամ կայծառ օնցի: Ծնած է հա-
ւանաբար ԺԴ. զարու կիսուն: Ուսած է
Ակեռացի կամ Լամբրոնոցի Գէորգ Վար-
դապետի ձեռքին տակ, մնալով անոր մօտ
18 տարի, և հիմնովին տիրանալով մաս-
նաւորաբար գրչութեան արուեստին:

Իր խնդրանքով Գէորգ Ակեռացի գրած
է երկու խրատներ. Խրատ վասն Հան-
գամանաց Հեգից և Առող անութեանց, և
Խրատ Գրչութեան:

Գոյներերիցանցի գրչոգրական գոր-
ծունէութիւնը կ'ընդգրկէ երեք տաս-
նամետակներ, նախ կիլիկիոյ մէջ 1285 -
1307, և ապա Մազուսայի (Ֆամակուսթա)
մէջ, Կիպրոս, 1307 - 1314: Իր օրինակած
ձեռագիրներէն մեզի հոսած են մօտ տաս-
նեակ մը ժամանաներ: Իր կորդին Ստե-
փանոս Քահնանայ հասցուցած է ընտիր
Գրիչ մը՝ Վահրամ Սորկուտդ:

Ստեփանոս Գոյներերիցանց առհասա-
րակ գրած է մազազաթի վրայ, ընտիր
բոլորքով, կրօնական բովանդակու-
թեամբ երկեր: Կը դաստորինք ժամա-
նակագրական կարգով:

1. — 1288. — Ակեռացի Գէորգ Վար-
դապետի աշակերտներէն իտաշտառը Դպիր
փափաքած է ունենուլ Աստուածաշունչ
մը: Հին կատարանի առաջին մասը գրած
է ինքը (1285): Նոր կատարանը ստացած
է իր քեռիին Աստուածատուր քահնանայի
օժանդակութեամբ: Ստեփանոս Գոյներե-
րիցանց ալ գրած է մարգարէական մատ-
եանները և սրբագրքերէն մէկ քանին:
Այս Աստուածաշունչը երեին կը գտնուէր
ի Պրուստ:

2. — 1290. — Մազաղաթեայ Աւետա-
րան մը. օրինակած է Արմէնի Աւուպատին
մէջ, կաստանդին քահնանայի համար: Այս
Աւետարանը ատենօք կը գտնուէր Սիս:

3. — 1292. — Մազաղաթեայ Աստուա-
ծաշունչ, գաղափարած է իրեն համար,
փոքր բոլորգրով, իր ուսուցչին Գէորգ
Ակեռացիի և անոր աշակերտին Ատաշտառը
Դպիր օրինակներէն: Էջմիածնի Մատենա-
գարանին մաս կը կազմէր նախառէս:

4. — 1297. — Աստուածաշունչ, օրի-
նակած է Ամբու Թագաւորի և Գրիգոր
Անուարզեցի Կաթողիկոսի օրով: Գրիգո-
րերեմն կը գտնուէր Եւղոկիոյ Ս. Գէորգ
Եկեղեցին:

5. — 1297. — Օրինակած է Եսայեայ
մարգարէութեան գիրքը, Ատանայի Ա.
Ղազար Եկեղեցին կանգնող Ուկիներ քա-
հնանայի բաղանքով: Զեռագիրս այժմ կը
գտնուի ի Ա. Յակոբ 356 թուահամարի
տակ:

6. — 1300. — Հին կատարանի երկ-
րարգականն գրքերը — Եպիքեր, Յուղիթ,
Տովքիթ, Ա. Բ. և Գ. Մակարայեցիքը —
և զանազան ձառեր. օրինակած է իրեն
համար: Այս գիրքը այժմ կը գտնուի
Ա. Յակոբի անութեանց Զեռագրտան մէջ, երկու
համարի բաժնուած. ձառընաիրը թուա-
գրուած 368, իսկ Հին կատարանի Մա-
սունքը 369:

7. — 1310 - 1312. — Մազուսայի մէջ,
Կիպրոս, օրինակած է Գործք Առաքելոց
հանդերձ Կոթողիկէ Թղթովք (1310) և
Աւետարան ըստ Յավհաննու (1312), Կիպ-
րոսի սինէջալէս տիկին Ալիծի հրամանով:
Այս ձեռագիրը կը գտնուէր Կերլա՛ թուա-
գրուած 31:

8. — 1314. — Դարձեալ վերոյիշեալ
տիկին Ալիծի հրամանով Մազուսայի մէջ
օրինակած է Մազմոսարան մը և զանա-
զան գլուխներ ժամագրքի, ձաշոցի և
Գանձարանի վերաբերեալ. ինչպէս նաև
Թովման Ագուինացի Յաղագս Զօդուածոյ
Հաւատոյ երկը: Այս ձեռագիրը ևս կը
գտնուի ի Ա. Յակոբ, 265 թուահամարով:

Իր գրչէն մեզի հոսած են շատ մը
յիշատակարաններ և քանի մը վերտառու-
թիւններ: Կարեսորները կը ներկայացնենք
այսեղ, ամբողջութեամբ կամ մասամբ,
դաստորուած ժամանակագրական կար-
գով:

1. — 1288. — Պրուսայի Աստուածա-
շունչէն. —

.... ի ժամանակս աստուածապաշտ արքայի Լեռնի՝ որդւոյ Հեթմայ, և ի նորուն աստուածաէր անդրանկի Հեթմայ տէրութեան աստուածապահ բերդիս Լամբրոսնի, և ի Կաթողիկոսութեան աստուածանման մէջ կրկին ծերութեամբ պատուեալ անառն Յակովայ, ԶԼԴ [= 1285] թուականի Հայոց գրեցաւ տառս յաստուածապահ սրբարանս մեծի ուխտիս Սկեռայի, ընդ չքով թեսյ աստուածապահ սուրբ նշանիս և սրբոյ Փրկչիս, յառաջնարդութեան անառն Մինասայ: Բատ բանի սրբոյ ուրումն, որում բաղաւյ ոք՝ նմին և համանել ջանայ. վասն զի բուռն է քան զման սէր, զար չուրք բաղումք ոչ կարկն շիջուցանել, մանաւանդ յորժամ յԱստուած իցէ տռփումնն, Այսպիսեաւ երանելի ըղձիւք առ ստացումն աստուածաշնչ տռռիցս վառեալ սրբանունդ պտտոնին Խաչատուր, թելադրութեամբ Գէորգեայ Վարդապետի, առ որում կայր ի վարժս կրթութեան բանի և գրոց, ուսումնասէր դպիրն Խաչատուր, ինքնագիր երկաւք ստացաւ զդիրս Մննդցն, զիատաւորացն և զթագաւորութեանց: Եւ վասն ոչ բերելոյ տկար մարմայն զերկս գրութեան՝ աւժանդակեաց սնուցիչ նորին և քերի աստուածապաշտ քանանցն Աստուածատուր, և սակս աղքատութեան կարծեաց՝ նախ զնոր կատարանս ետ զրել իբրև զյայժ հարկուորի Եւ դարձեալ յԱստուած խրախուսեալք՝ իմով ձեռամբ Ստեփանոս Գոյներ երիցանց փցուն գրչի ստացան զաստուածային գիրս սրբոց մարգարէիցն և զարրադրաց սմանց, յԶԼ [= 1288] թուականիս . . . : — Հ. Գ. Զարբ., Մատ. Հայկ. Թարգ., էջ 156-7:

2. — 1290. — Սոսյ Աւետարանէն. —

.... Արդ գրեցաւ սո ի լսարանում խցկան ի հիւսիսակողմին թիկունո լերինս որ կոչի Արմէն, որ և հուպ կայ յելից անմատոյց ամրոցին Լամբրոսնի, այն որ երեկի ճոխութեամբ նստի ի գլուխն Տարսոնի՝ յառաջնումք գահաւանդի ահաւոր լերինն Տաւրսոի, ի թօւականիս Հայոց ԶԼԹ [= 1290], ի հայրապետութեան անառն Ստեփանոսի յառաջնումք ամի և ի թագապահութեան Հայոց խաղաղար և բարեհամբաւ արքայորդւոյն

տեառն Հեթմայ որդւոյ Լեռնի: Եւ գրեցաւ յազնիւ և յամինընտիր աւրինակէ, տինա, և յարուեստ բանի ոչ յաննշան գրչէ, այլ լի և կատարեալ արուեստիւ ի բանս, ի բառս, ի էպորդս, ի բացատս, և ի տրոնմունս առողջանութեանց: Վասն որոյ աղաչնմ զհանդիպողսդ և զվայելողսդ աստուածեան տառիս, սրբի մտաւք լիշել ի Քրիստոս զկոստանդին քանանց զստուցոյն ի Քրիստոս հանգուցեալ ծնողսն իւր և զամուսինն իւր, և զամինայն զզարմն իւր և զուսուցիչս: Եւս առաւել զբարեաց յիշատակաց արժանի հոգեւոր մայրն և զմուսուցին նորին զտիկին Ալիծ կրւնուոր համեստ և պատկառելի վարուք ծերացեալ, և ամառ յառաջ ի Քրիստոս հանգուցեալ, և զիս զմեղուցեալ գրիչս Ստեփանոս Գոյներերիցանց, և զծնաւզն և զուսուցիչսն իմ . . . : — Զհոագիր Տեսր Սահակ Կթղ. Խապայեանի:

3. — 1292. — Էջմիածնի Աստուածաշունչէն. —

«Փառք . . . Որ ներեաց անարժանիս և ետ զուրութիւն տկար և մեզաւք լցեալ տնձինս մեղաւոր հողոյս Ստեփանոս Գոյներերիցանց, որ թէպէտ և սպասւորական աշաիծանի վիճակեալ էի, սակայն ամաչնմ կոչել զիս ի բարձրագունէն, այլ մականունութեամբ կոչիմ Գոյներերիցանց: Որ յոյժ տռփելի սիրով անխոսոր և անշեղլի մտաւք՝ ի յատին ժամանակի իմոյ ցանկացաւզ եղեալ աստուածաւանդ մարգարէական բանից հնոյն, և աստուածայրականին Ցիսուոի լսւափառ նոր վարդապետութեան: Եւ իմոյին երկաւք և բազում աշխատութեամբ զիափաք տենչանոց սրտիս լցի, և յանդ հանհալ աւտրանցի զաստուածաշունչ գիրս բավանդակ, և զայլ պիտանացու և զյայժ հարկաւոր եկեղեցական աւանդութիւնն ըստ իմոյ կարողութեանս խսչարագիծ գրով: Արդ աղաչնմ զամեննեսեան զհանդիպալուզդ որք ուտէք ի կինաց մանանայէս մտաւք, և զպասուք ծարաւ հոգւոյ՝ կենդանաբուզի ջրովս աստուածայնով արբուցանէք, յիշեսջիք ի Քրիստոս զհանդեոր հայրն իմ և լուսաւորի զգէորդ վարդապետն, և զհամակամ աշա-

կերտ նորին զետաչառուր, յորոց աւրիշակաց և զգիրքս գրեցի բազում խնամարկութեամբ ի նոցանէ, Այլ և մեղաւք թաթաւեալ անձին գրչիս՝ մեղաց թաղութիւն հայցեցէք ի Քրիստոսէ. Նու և մերն ծնողաց և եղբարց և քերց հարազատաց, նու ուսուցչաց և անդակից ընկերաց մերձակայիցն և անմերձից Յիշեսջիք ի Քրիստոս զկոստանդին քահանայ Տարունացի և զծնուղան իւր և զնոպեռ մայրն իւր, որ բազում գութ խնամոց ցուցեալ է նոցայիս: Յիշեսջիք և զԴուիթ սարկաւագ յորոյ արդեանցն կայ ի նիւթ սորին: Յիշեսջիք և զՎահրամ որդի Գորգոյ որ աւզնեաց ի նիւթ սորին: . . . Թուուկան Զիլլա [= 1292]: — Շողակաթ, Հայկ, Ժաղավածու, Վազարշապատ, 1913, Տախտակ 2:

4. — 1297 էն առաջ. — Վերտառութիւններ.

ա. — [Խրտա վասն հանդամանաց հետքից] Գիշորգոյ վարդապետի արարեալ ի խնդրոյ Ստեփանոսի մականուն Գոյներերիցանց կայթառաւնցոյ մեզաներկ անձինք: — Գրչութեան Արուեստի Լեզուական-Քերտականական Տեսութիւնը Միջնադարեան Հայտառանում, լ. Գ. Խաչերեան, Երևան, 1962, էջ 287:

Բ. — «Էլրտա Գրչութեան, զոր արարեալ էր զատ յառաջագոյն Գիշորգոյ Վարդապետի ի խնդրոյ ուրումն, զորոյ զպական ի նմանէ յետոյ իմ ի Վարդապետէն խնդրեալ և նու կատարեաց զինդրուածս իմ, եղեռլ յառաջ զԱռիստակիսի արարեալն, և զթերին ի նմանէ կատարեաց ինքն ինձ նուռատիս Ստեփանոսի Գոյներերիցանց, որոց ողորմեացի Տէր արարողին և խնդրողինք: — Նոյն, էջ 308:

5. — 1297. — Եւգոկիոյ Աստուածաւունչէն. —

«Գրեալ ձեռամքը Ստեփանոս Գոյներերիցանց ի Զիջ, ի թագաւորութեան Հայոց Սմբատայ և ի կաթողիկոսութեան տեառն Գրիգորից: — Մատ. Հայկ, Թարգ., էջ 156:

6. — 1297. — Եսայի Մարգարէէն, Զեռ. Ա. Յ. Թ. 356. —

«Փառք . . . Բազմանաւք ոռ ի Քրիստոս յուսոյն շարժեալ աստուածաւէր

քահանաց ոմն անուն Ասկեներ, և ի փարթամութիւն առանցքին Աստուածոյ զոր կանգնեաց յանուն Սրբոյն Ղազարու, յասուածապահ քաղաքն Ատանա, կամեցու սատանալ զասուածաբարան գիրս մարդարէին Եսույայ, իւ ոռ այս թախանձեալ զմեղասաներկ գրիչս Ստեփանոս Գոյներերիցանց. և ես թէպէտ վասն ի ծերութիւն հակիլոյ, և նուազութեան աչաց և բթութեան զգայտրանաց, որոց առուգաւթեամբն ի ճան կատարին արուեստք, և զարդարուն յաւրինին ձեք՝ աղքատացեալ, այլ՝ ոչ կարացի անլուր լինել խնդրողին. խոչոր և մացառուղ գծիւ ձարբաւեցի զսուրը գիրս զայս, ի վայելու Ասկեների և ի զգուշութիւն անձին ի կեսնս, և յետ մահու յիշատակ բարեաց որոց Տէր ժառանգագեցուցէ, որք սպասաւորին սուրբ առաջարին Սուրբ Ղազարու, Զորս աղաչիմ զսրբասէր ժառանգաւորսդ սուրբ առաջարիս և սուրբ մատենիս, միամիտ սրտիւ յիշել յտղաւթս զատացաւզ սորտ զԱսկեներ քահանաց և զծնուղանորին, և զամհնայն զարմի իւր, ևս և զտառապետ ոգիս զնուաստ գրաւզս, և զծնուղան և զուսուցիչն իմ ի Տէր, և զուք յիշեալ լիջիք յառատ ողորմութիւնն Աստուածոյ: Գիրքս այս ի թուին Զիջ [= 1297] աւարտեցաւ ի փառս Աստուածոյ, ի թագաւորութեան Հայկազեան ազգիս Սմբատայ և ի կաթողիկոսութեան տեառն Գրիգորից: — Զուցակ Զեռ. Ա. Յուկորիանց, Գ. Հատոր, էջ 277:

7. — 1300. — Հին և նոր պատմութեանց ժողովածոյէն, Զեռ. Ա. Յ. Թ. 368, 369. —

«Փառք . . . Ես մեղուոր հողս Ստեփանոս ցանկացայ աստուածաշունչ գրոց ասանալ՝ և կատարեաց Աստուած զփափսն իմ, և զրեցի որպէս հանդիպեցաւ, երեք գիրք ի տուփ մի, և այլ շատ, և այլ սակաւ, և հանդիպեցաւ այս գիրքս վերջոյ քան զամհնայնուն: Եւ զի էի ես կարի յոյժ տկարացեալ յաչաց, և տագնապ մեծ ի մահմետականացն, և էր գիրքս յոյժ նուրբ՝ կամեցայ ի նոր պատմութեանցս զայսչափս ի հետ գրել. կէս զրոցս հին պատմութիւն, և կէս զրոցս նոր, Աղաչիմ ներել սղաւանացս և խոշոր

ձարբաւանացս, զի յոյժ վշտաւք և տառապանաւք գրեցի: Աղաչեմ ներել և թուղութիւն խնդրել յանցանաց իմոց ի Քրիստոսէ, և ինք ձեզ թողցէ: Գրեցաւ ի թութիս Զիթ [= 1300], ի գուան ժամանակիս, քանզի զԼամպրունին քաղաքն և զայլ շրջաբնակս այրեցին ժանմետականքն, և մնք մազապուրծ հազիւ հազ կարացաք գերծանել Աստուծոյ աւգնութեամբն, և այժմ կոմք յերերման և ի սասանման, զոր Տէք Յիսուս ելս արասցէ բարեխաւառաւթեամբ սուրբ վկայիցն իւրոց. զի վասն ծովացեալ մեղացն իմոց այս ամենայն գործեցաւ: — Ցուցակ Զեռ. Ս. Յակարեանց, Դ. Հատոր, էջ 16:

8. — 1307. — Երեանի Աւետարանէն, Թ. 7691. —

«Յիշեալիք . . . և զատկաւ աշխատաւզս ի սմօ վասն ուղղութեան՝ զմեղուոր հողս Ստեփանոս Գոյներիցանց . . .»: — Լ. Ս. Այտչիկեան, Յիշատակարաններ ԺԴ. Դարի, էջ 52:

9. — 1310. — Գործոց Առաքելոց Մեկնուցնէն, Զեռ. Ս. Յ. Թ. 700. —

«Փառք . . . ի թվականիս մերոյ ազգի Զօթ, մեղանոր հողս Ստեփանոս Գոյներիցանց՝ էի յառաջ ամօք եկեալ ի կիպրոս կզզի, իրը թէ ի քարիստն հողմոց փախուցեալ և սոկաւ մի յանդորրեալ՝ մերձ յաստուածաւէր ծառայք Տեռան եկեալ յարեցեալ, և բազում խնամս գթոյ ի նոցանէ գտնեալ, Ստեփանոս ոմն Այսասոյ մականուն Գորգոնց, հանդերձ աստուածաւէր մարբ և քիրք և զուգակցաւ, և էին մայրն և քոյրն բազում ամօք տյրիք, պատուելոյ արժունաւարք, ըստ առաքելական հրամանացն: Էր և ի տանս աստուածաւէրձ այր մի անուն Յակոր, յաշխարհական հանդերձիւ, այլ գերազանցեալ առաքենութեամբ քան զյաքունս: Եւ ես ի սոցա միջի որպէս յաստուածաւունկ բուրաստանի միսիթարէի ի սոցանէ զօրհանապազ: Եւ յառաջ ամօք ի հրամայական խնդրոյ տեսան Յոհանիսի յեղօրէ թագաւորին Հայոց Հեթմոյ, ի մեծ և ի սուրբ վարդապէտէն Գէորգեայ Լամբրոնացւոյ աշխատասիրեալ կայր օրինակ համառօտիս մերձ առ մեզ իւր ձեռացն զրով որպէս թէ յիսուն. և թէ կամհնայք տեսանէք

ի գրոց նախերգանի զոր առ երիս խնդրօղն առ տէր Յոհաննէս է գրել նոյն վարդապէտն Գէորգ: Ես եղի ձեռն յԱստուած ասպաստան եղեալ, և նու ետ կարսղութիւն հասանել յաւարտումնեւ: — Ցուցակ Զեռ. Ս. Յակարեանց, Ե. Հատոր, էջ 306-7:

10. — 1310. — Կերլայի Գործք Առաքելոցն: —

«. . . Գրեցաւ պրակք սուրբ Առաքելոցն, Կաթողիկէիւթքն հանդերձ, հրամանաւ աստուածաւէր և բարեպաշտ պարունին տիկին Ալիծին, մաւրքաւը թոգուրացն Հայոց, ի միսիթարութիւն կինոց իւրաց և յիշատակութիւն հոգւոյ իւրոյ, ի ձեռն իմոյ նուաստիս Ստեփանոսի Գոյներիցանց: . . . ի թուրին Զօթ զրեցաւ, ի բազմաթշուառ ժամանակի, որոց տարակուելոցն այց արասցէ մարդասէրն Աստուած . . .»: — ԺԴ. Դարի Յիշատակարաններ, էջ 68:

11. — 1312. — Կերլայի Ցուցակն Աւետարանէն: —

«. . . Գրեցաւ աստուածաւան աւետարանս Յոհաննու ի հրամայական խնդրոյ աստուածաւէր և բարեպաշտունի պարունին տիկին Ալիծի սինէջալէսի կիպրոսի, որ էր գուստը պարոն Հեթմոյ, որ տէր էր Լամպրունին, յիշատակն նորա աւրհնութեամբ, և ողորմեսցի նմա Քրիստոս Աստուած, ամէն Արդ, վերոյգրեալ բարեպաշտունի պարոնն բազում ամս խնտմորկեաց զիս բազում և մեծ զթով, դրեթէ որպէս որդեսէր ծնուզ զանդրանիկ իւր, այնպէս զթոց ի նուաստս և յանարժանս: Եւ ես յետնետլս յամինայն բարեաց, սուանուն Ստեփանոս, որ ամաչեմ կգերազունէ քահանայ տնուամբ կոչիւ, այլ մականուամբ Գոյներիցանց: . . . Գրեցաւ ի թուրին Զեռ, ի Դեկտեմբ. Իթ, ի կիպրոս կզզի, ի Մազուսայ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին: . . . Այլ յինէն, ծերացելոյս մարմնավ և մտաւք, հազիւ այսափս ծրագրեցաւ, զգեղեցիկն վեհքն ծրագրեն, զանանաւզքոյ աղաչիմ մեր յանցանացն թողութիւն չնորհնեւ . . .»: — Ցուցակ Զեռ, էջ 68-9:

12. — 1314. — Սազմոսարանէն, Զեռ. Ս. Յ. Թ. 265. —

«Փառք . . . ի թուականիս Հայոց Զեդ, ի թագաւորութեան Հայոց Աւշնի, և ի կաթողիկոսութեան Կոստանդիալ, եղե կատարում գրոցաւ Յերեսս անգետ աղա-չեմ, որք հանդիպիք սուրբ գրոցաւ յիշե-ցէք ի բարին զարժանին յիշման զամա՞ Ա-լիծն զսինէջալէսն կիպրոսի, որ է զուար պատրոն Հեթմոյ, որ էր տէր Լոմպրու-նին, որոյ ողորմեցի նման Տէր Աստուած, ամէնու . . . , Գրեցաւ յընտիր աւրինակէ տինու կատարիալ յարուեստ գրչութեան ի կիպրոս կղզի, ի քաղաքս Մաղուսա, ի վանքս Հայոց, ընդ հավանեաւ Ա. Աս-տուածածնիս և Ա. Յանանու Աւետարանչի ձեռամբ մեղաւոր հողոյ և անարժանի, Ստեփանոսի Գայներերիցանց . . . : — Ցու-ցակ Զեռ. Ա. Յակոբեանց, Գ. Հատոր, էջ 61-2:

13. — Թուականը անյոյտ, Արմաշի Տօնացոյցէն. —

« . . . Ես նուաստ գրիչս Ստեփանոս մականուն Գայներերիցանց, ութ և տասն ամ կացի առ ստո սուրբ վարդապետին մեծին Գէսրգետ Լամբրունացւոյ . . . : — Բ. Ե. Վ. Կիւլէսէրեան, Ժազովուրդին Տօնացոյցը, 1901, էջ 60:

Հետագայ Գրիչներ լու վկայութիւն-ներ կու տան Ստեփանոս Գայներերիցանցի մասին, Ատոնցմէ կրնանք յիշել հետե-նելները:

1. — 1298 թուին, իր աշակերտներէն Վահրամ սորպկաւագ կը գրէ. «Նաեւ առ ապագայագ հանդիպօզս և ընթերցօզս կամ գաղափարօզս մաղթանք բարւոյ յիշման արժանաւորիլ զհագեռը հայրն իմ և զու-սուցիչ, որ իրբե զհուր մաքրէ զիմ զմարմնական ախորժակս՝ յաստուածայինսն յորդարելով հանապազ աննախանձարտը, զՍտեփանոս Գայներերիցանց»: — Կիւլէ-սէրեան, Ցուցակ Զեռ. Դարձթիոյ, 1961, էջ 478:

2. — 1321 թուին Ստեփանոս Երկայն կը գրէ. «Արդ, թէպէտ և անարհեաս էի գրչութեանս, վանաքի և անյորմար, այլ հանդիպեալ լու և ընտիր աւրինակի, որ գրած էր Ստեփանոս Գայներերիցանց, այն որ լի էր և պատարուն յարհեաս գրչութեան և ընդ բնաւո հոչակիու, նաև բանիւ կատարիալ և հոգւով լցեալ, որ-

ՖԻԼԱՍԵԼՖԻՈՅ

ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳԻՐՆԵՐԸ

(FREE LIBRARY, PHILA. PENNA U. S. A.)

Դ.

ԶԵՌԱԳԻՐ ԹԻՒ 122 — ՀԱՄԱՅՆ ՃԱՇՈՅ

ՆԱԽԱՎԱԳՐԱԿԱՆ. —

ԻՌՈՒԱՐԻ 92: Պահպանաթիվ՝ 2, մագա-ղաթեայ մատեանի վերջաւորութեան, ա-րանք կը պարունակեն հին երկութագիր հատաւածներ նոր կատարանէն, Մեծու-րիւն՝ $13 \times 9 \times 3$ ամ., 27 տագ իւրաքան-չեւր էջի վրայոյ Դրույն՝ երկուին, մանր բոլորգիր — ու մելանի կողքին զար-ձածուած է կարմիր մելան վերնազիրնե-րու համար և զորչ մելան զարգարանք-ներու համար, Կովի՝ տախտակեայ կաշե-պատ — մաշած, Նիւր՝ կարծր տյլ ողորկ և փայլուն թուղթ — շատ տեղիր զու-նատած ժամանակի աղդեցութեան տակ, Խուալին՝ մօտ 1251, «ի թագաւորութեան Հայոց Հեթթովթ⁽¹⁾ . . . ի հայրապետաւթեան Տեսոն Կոստանդիոս⁽²⁾ . . . : Գրոյ Յավ-հաննէս, Տեղի՝ ու գուտորիս ՑԱԽՈՒՏ և ի մենաստանիս Ակներ», Վերջին կազմով՝ Մատթէոս Կափակապօս, Խուալին Կովի՝ Թձ՛ (1103 + 551 = 1654), «իւստակարութ չորս հատ, Խերուրիւն՝ մի քանի թերթեր ինկած ևն 33 րդ թուղթէն ետք:

(1) Հեթթովթ Ա. Թագաւոր Կիւլէսէր:

(2) Կոստանդիոս Ա. Կամողիկոս Հայոց (1221-1267):

պէս ահա յայտնի է իմաստոց և սասարդ գիտազաց, զի լի և կատարեալ էր ար-ուեստիւ, ի բանս, ի բառս, ի լծորդս, և ի բացառս, և ի արանմաւնու առազանու-թեանց»: — ԺԴ. Դարի Ցիշատակարաններ, էջ 169:

3. — 1358 թուին Գրիչ Աւագ Երէց կը կրնէ միհենոյն վկայութիւնը Ստեփանոս Գայներերիցանցի մասին: — Տիւ, Արա-Արք. Աւերմէեան, Ցուցակ Զեռ. Հալէպի, 1935, էջ 118:

Ն. ԵՊԱ. ՄԱԿԱԿԱՆ

ԲՐԱԿԱՆԴԱԿՈՒԹԻԹԻՒՆ. —

Զեռագիրս կարելի է կաչել «ՀԱՅՄԱՅՈՑ ՃԱՆԱՋՅԱ» կը բավանդակէ հետեւաւ բաժինները. —

Ա. — ՃԱՆԱՋՅԱ — թերթ 2-թերթ 56, կը սկսի «Յաւնուարի զ ծնունդ Բախ ԱՌՅ մերայ և այս կանոն կատարի. ող, կց. Տէր Հավաեսացէ զիս . . .» ելու. կը վերջանայ «Յիշտառակ Պետրոսի և Պաւլոսի. յիւր ամիսն գիտ. Սր. տատքելոցն Յաւնուար և Յավհաննաւ. ձաշոցի այս համառառ բաժնին 56րդ թերթին ու. սիւնակէն կը սկսի ձեռագրիս առաջին յիշտառարանը, որ հետեւալն է. —

«Բա ԱՌՅ. ողորմիս գրադի սորա ՅՈՒՀԱՆԵՍԻ և թաղ զմհոս նորա և որ բոլորով սրտիւ ցաւակցարոր խնդրէ և զնուրացն ամիսն, Արդ աղաչեմ զամենեսեան ավ սուրբ հարք և հղբայրք մանկունք նոր սիսմիսի ոյք հանդիպիք յայում գծի, ոչ մեղադրէ մանրութիւն զրի սորա և խոչսրութիւն և հատորութիւն զի վասն անճարակութեան արարի և իմ սիրոս զայս ուղեաց և այս էր կար մեր. Այլ յիշեցէք ի մաքրափայլ յաղութօ ձեր զեղկելի զրիչ յոհաննէս և զծոնզոն իմ ես առաւել զնարազատ հղբայրիկն իմ զկոստանդին վանական քահանույ որ ի տղա հասակի փսխեցաւ ի քրիստոս և եթող ինձ սուդ անմիսիթար զի ոչ հոնդիպեցաք միմեանց վերջին ողջունիւ. սորյ ողորմիսցի նմա տէր յիսուս քրիստոս և թողէ զյանցոնս յիշողաց և յիշեցելոց և նմա փոսք յաւիտեանս ամիսն.»

Բ. — ՄԱՆԱՋՅԱ — թերթ 56ր-67ր. կը բովլոնդակէ «Կանան Հաղպարդ Տալոյ» և «Կանոն Զամենացն Վախճանեալսն ի Քրիստոս»: 67րդ թերթի բ. սիւնակին վրայ կայ հետեւալ յիշտառակարանը. —

«Յամի ևթն հարիւրերարդի — և այժմու, ջնջուած բառ մը կայ — սկսեալ վեցիրորդի թուարերաւթեան հայոց առամբարի գրեցաւ ժամագրկունքս վասն հանապահնի և անճարակութիւնն աշխարհիս կիլիկեցւոց ի գաւառիս Յախուտ ի հոչտակաւոր և սուրբ մենարանիս Ակներ ընդ հավանաւ սրբունոյ տիրամաւը առաւաւածնի և սուրբ առաքելոցն — առառնեղ

(ջնջուած) — բաւրն յակորայ և կենակիր նշանիս սուրբ կաստոնդիս և այլ առաւածունուկ սրբոց որ հաւաքեալ կան ի սմաւ: ի թագաւորութեան Հայոց Հեթմայ քրիստոնասիրի և ուղղափառի սրբ տէր առաւած ամցէ նմա և սրգւաց իւրոց Լեռնի և Թարօսի երկոր ժամանակ խոզազութեամբ վարել զթագաւարութիւն իւրեանց: ի հայրապետութեան տեսան կաստոնդիս և ի հայրութիւն սուրբ ուխտիս հոգելից ծերունույ ճգնազդիս և քրիստոնասէր անձին Հայր Մխիթարյան և նորին հայրազատին բարեհնորհն երածչտին վարդանայ, գրեցաւ սակաւագիծ մատեանս ձեռամբ յագնամեզ և եղկելի անձին Յոհանէսի վշտալից և տգէտ գրչի զոր բազում վշտաւք իմ ձեռնամուխ եղեալ ի առ. (— Նոյնիմոսա յիշտառակարան նման թերթ 56ա. ի —) . . . զի այս էր կար մեր . . . յիշել զհանգուցեալսն ի քրիստոս զհարազատ եղբայրիկն իմ զկոստանդին կուսան քահանայ . . .»:

Գ. — ՏՕՆԱՑՈՅՑՅ. — (Ծառ համառատ) — Ակեւարանացայց և ժամակարգութիւնք կարգիս ըստ սրբոյ Լուսաւորչին աթոռայ զոր ընկալեալ սրբոյն Սահակայ և հասուցին առ մեզ նախնիքն մեր»: Այս բաժինը ունի թերթք 68ր-77ա և որ կը բավանդակէ Աստուածայտնութեան ձրտգույցէն մինչև Խաչի Տօնը:

Դ. — Թերթ 77 ա. ի կէսէն կ'երեի և Խուանուրիւն սուրբ Երրորդութեան զոր ասացին սուրբ ժողովն որ ի Խիլիխ և ընկալան ուղղափառ եկեղեցից Հայոց»: Հուատամք: Թարոզ: Աղօթք Փառք քիզ անսամբան անուն և անզուգական անձնուարութիւն . . .»: Թերթ 78ա. երկրորդ կիսուն կայ հետեւալ յիշտառակարանը. —

Ակրդ ես եղկելիս և յագնամեզս Յոհաննս զրադ սորա խնդրեմ . . . ոչ դատու պարտել զմեզ, այլ յերես անզեալ աղաչեմ սրպէս շան սովիցենեայ տուք զփշրանս աղութից ծեր խնդրելով ի ահեանէ զթագութիւն մեղաց և եղրօր կաստանդիսաւ:

Ե. — Կանովն Զուր Աւրանելոյ յաւուր Յայնուրեան Տետան մերոյ Յիսուսի Քրիս-

ՏԱՐՅՈՒ - թերթ 78թ - : Նոյն էջի յատակի լուսանցքին վրայ կարմիր մելանով գրուած է «զինչ յուրինակն զտի զայն գրեցի» ... (յաջորդ տողը անընթեռնելի է): Խոկ թերթ 79ի յատակը գտրձեալ գրուած է - «Աւրինակն ծուռ էր ես կրկին գրեցի և ինն տող զտյըն միտճղի զի տեղու վճարեցաւ թէ գժար թուի դու շրջէ զթուղթս յետ և ի նշանածն սկսիր և կարդա և մի մեղադրեց»:

«Աւրինուրիւն ջրոյ զոր ասացեալ է Տեառն Բարօպի արքայիսկոպոսի Կնարու Կապալովկեցւոյ: Աղոթք»:

«Քաղոց Ժ. Շողակարին զոր եսես ուրեք ... (ցեցը կարած է) զոր ի հիմնուրիւրիւն եկեղեցւոյ»:

Զեռագրիս վերջաւորութեան կայ հետեւալ յիշտատակարանը, որուն թուականը չատ ուելի ուշ է քան ձեռագրի գրութեան թուականը և որ կը պատկանի մատեանը վերակազմողին. —

«Զենքին կազմող սուրբ ուետարանին զլյոթէս եպիսկոպոսն յիշեցէք ոտ Քրիստոս, որ կրկին նորոգեցի թօֆի ... — յիշտատակարանը կը չարունակուի ննջեցեալներու անուններ յիշելով — :

ԶԵՄԱԳՐԻՍ ԹՈՒԱԿԱՆԸ. — Առաջին յիշտատակարանէն յայտնի է գրողը, Երկրորդէն կը հասկնանք Կիլիկիան շրջանին գրուած ըլլալը «յամի եւթնհարիւրերորդի ... և սկսեալ վեցերորդի թուորերութեան հայոց տուժարիս», որ հաւանաբար պէտք է մօտաւորապէս ընդունիլ 700 + 551 = 1251 — անշաւշտ քիչ մը ուելի ուշ — Ցիշեալ Կոստանդին Ա. Կաթողիկոսին, ժամանակակից Հեթում Ա. Կիլիկիոյ թագաւորի, թուականը (1221—1267) լուապէս կը յարմարի մեր վերև ենթագրած թուականին՝ 1251, որ իր կարգին հիմնըւած է երկրորդ յիշտատակարանի ակնորկութեան վրայ:

ԶԱԼԻՆ ՎՐԴ. ԱՐՁԱՒՄԱՆԵԱՆ

Ֆիլասելֆիա

ԻԵՐ ՅՈՒ ԺԶ. 4Ի ՄԷԶ

Երրայերէն բառարանները և մեկնութիւնները Յորի վրայ, մեծ գժուարութեան կը հանդիպին ջանալով բացատրել Յորի ժԶ. 4Ի(1) «հիբրա ալէկեմ Յմիլլիմ նախագտառութիւնը»: Բացի կամայական և հեռունները փնտուած փափսիսութիւններէ բազածայնական բնագրին մէջ, որոնք չինչ պէտք է ըլլայ(2) ի ենթագրութիւններու մէջ նեցուկ կը վնտանի, «հիբրա բայը կամ' մ խնամութիւն մէջ կը դրուի հեր Աի ու ընկերութիւմը միտնալը(3), կամ անջատելով այս արժատէն, կը կապուի արտիքէն հեր արժատին նետ, որ իր առաջին ձերին մէջ կը նշանակէ «պէտքիսութիւն» և երկրորդ ձերին մէջ «զարդարիւ, պճնել (ճառ)»(4):

Ինչ որ Յոր կը փոփաքի այս հատուածին (Յոր, ժԶ. 1-6) մէջ ըսել, բուլորովին յատակ է: Կ'ըսէ իր բարեկամներուն, անոնց երեսին, թէ եթէ իր դերը շրջուէր անոնցինին նետ, ինք ալ պիտի կրնոր անոնց միխթարութիւն տուլ պարապ խօսքերով: Պիտի կրնոր մըցիւ իր երեք բարեկամներու «հովոս խօսքերով» (ժԶ. 3, ժԵ. 2): Այս նկարագրէ այսպիսի խօսակցութիւն մը, քանի որ ան զուգունական մը կու այս «հովոս խօսքեր» նախագտառութեան և շակնորդկելով խելոցի խօսակցութեան, «հիբրա ալէկեմ Յմիլլիմ նախագտառութիւմը»: Այս արժայայառաթեամբ: Այս արժայայառաթեամբ, ուրիմն, ան ըսել պիտի ուզէր նմանօրինակ բան մը, «ես ալ պարապ

(1) N. H. Tur-Sinai, The Book of Job (Jerusalem, 1957) 263.

(2) E. J. Kissane, The Book of Job (Dublin, 1939) 97, 99. La Sainte Bible ... de Jérusalem (Paris, 1956) 617.

(3) BDB (= F. Brown — S. R. Driver — C. A. Briggs, Hebrew-English Lexicon [Boston, 1906]) 288. C. J. Ball, The Book of Job (Oxford, 1922) 249.

(4) Ges. (= W. Gesenius — F. Buhl, Hebräisches und Aramäisches Handwörterbuch [Leipzig, 1921] 211, habar I. L. Köhler — W. Baumgartner, Lexicon in Veteris Testamenti Libros (Leiden, 1953) 273, habar I. G. Hölscher, Das Buch Hiob (Tübingen, 1952) 40.

ձայն պիտի հանէի խօսքերով որո՞նք ոչ
օգտակար և ոչ աւ քաղաքալոր պիտի
ըլլային ձեղից Արդ, վկայութիւն մը
կրնայ մէջքերաւի աքքատերէնէն ցուց-
նելու համար թէ երրայտկան բնագրին
մէջ փոփոխութեան պէտք չկայ և թէ
'ahbîrâ պրեէ կոպտկցութիւն երրայտ-
կան արժուած հերլի (3) կոմ աքքատերէն
eberu (4) հետ սխալ է, արովհեան ուրիշ
աքքատերէն արժուած մը կայ որ մեզի կը
ներկոյացնէ հորցին լուծումքը Այս ար-
ժամար հաբար Ան է (5):

Քանի որ բոլոր հատուածները ուր
այս արժուածը կը հանդիպի աքքատերէնի
մէջ յիշատակուած և ն Եփակոյի Ասուրա-
կան Բառարանին մէջ (Chicago Assyrian
Dictionary), հսո հարկ չկայ յիշելու այս
հատուածները, արոնք հսն դասաւորուած
և habarratu (6), habaru (7), habru (8),
huburu B (9) ներքեւ Հսո կը բուէ մի-
միայն ցայց տու այս արժուածին իմաստը:
Ճիշդ ինչպէս երրայտկան հեր արժուած
Յոր ԺԶ. 4ի մէջ, նոյնպէս նուև աքքա-
տերէն հաբար չի նշանակեր սովորական,
ամէնօրհոյ խօստկցութիւն, այլ կը նշա-
նակէ «աղմկալից ըլլալ» (10), այսինքն բար-
ձրածայն և պարտպ խօստկցութիւն ընել-
ածնել մասնաւորապէս հատուածները:
«Տա . . . surris ustadiru zamar uhtab[bar]»
(ապրերակ սինթար), «Ան որ պահ մը
տառջ վհատած էր, շուշով կատաղի (12) կը
դառնայ»: eli rigmésina attadir [ina h]u-bu-

(6) Տես երկրորդ ձանօթութիւնը:

(7) Ges. 211, habar I. Աքքատերէն B eberu (3),
համար, ահս CAD (= Assyrian Dictionary, Chicago,
1956), համար 4 (E), 13b.

(8) CAD, համար 6 (H), 7b.

(9) CAD, համար 6 (H), 7b.

(10) CAD, համար 6 (H), 7b.

(11) CAD, համար 6 (H), 220b.

(12) CAD, համար 6 (H), 7b, habaru A (b)/
ներքեւ Lambert, Babylonian Wisdom Literature
(Oxford, 1961) 40.

ri - si - na la isabbatanni sittu = սիսովեցա-
անանց (բարձր) ձայներէն. անոնց աղմու-
կին պատճառով չեմ կրնար քննանութ (13):

Յորը ուրիմն կը պատասխանէ իր բա-
րեկամիներուն, որոնք իրեն վտիս սփո-
փանք մը կը ներկայացնեն իրենց ամսի-
րանման առակներով» (ԺԳ. 12), թէ ինք
ու կրնայ «խօսքերով աղմուկ հանել»
('ahbîrâ b' millim) և սուռդիւ տաղնապի
մէջ պիտի չըլլար զանոնք լոկցնելու իր
իսկ հնովատ խօսքերով», եթէ այդպէս
ընարէ: «Ես աւ կրնայի խօսիլ ձեղի պէս,
եթէ ձեր գիրքին մէջ ըլլայի»: Կրնայի
աղմկալից ըլլալ խօսքերով ձեր դէմ (14),
այսինքն, «Ես աւ կրնայի խօսիլ ձեղի լոկ
աղմուկով» (15):

Այս օրինակը շտու լու ցոյց կու տայ
թէ աքքան երրայտկան բառագիտութիւնը
կրնայ սորվիւ դրացի գիտութեան մը մէջ
կատարուած յառաջդիմութենէն, և միտ-
մամանուկ նուև ապացոյց մըն է Յորի
Գրքին մեծապէս բանաստեղծական ոճին,
որ չի վարանիր հողուագիւտ բառեր
գործածելէ (16):

OSWALD LORETZ

(CBQ, 1961 Յուլիս, թի. 3,
համար 23, էջ 293-294):

Իրզի. ԱՆԻՒՇՈՒԽՈՒ. ԳՐԴ. ԶԼԱՌԱՆԻ



(13) CAD, համար 6 (H), 220b, huburu B (17)

(14) Տես verba dicendi 'al-niq, BDB 757c (6):

(15) Բաղմաթիւ օրինակներ չէղոք բայերու-
hiphilի մէջ, ահս G. Bergsträsser, Hebräische Gram-
matik II. (Leipzig, 1929) 19d:

(16) (Թարգմանիչին ձանօթութիւնը): Եաւե-
կան է զիտել տաւ Յորի եղբայրակցութեան
թարգմանութիւնը (Confraternity Version) ինչորոց
առարկայ նախագառանթիւնը կը թարգմանէ
իրեւ կրնայի առենախօսիւ ձեր վրայու:

ՀԱՅԿԱԼԻԱՆ ՎԱՐԴԵՐ

Ս. ԿԻՐԱԿՈՍԻ ԱՆԱՊԱՏ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. — Ա. Կիրակոսի Անապատը կը գտնուեր և կեղծաց գուառին մէջ, Բթնի լիբան ստորոտը և կեղծին առիրուած էր Ս. Կիրակոսի անունին. — Խոչիկեան, Յիշա. ԺԴ. Դարի, էջ 28, 296:

ՊԱՏՄԱԿԱՆ. — Ս. Կիրակոսի Անապատը պատմական ահսակէտ չունի ակներև հանգամանք: Վանահայրերուն անուններն իսկ չեն պահուած, բացի մէկ երկուքէն, որոնք են.

1. — Ատեփանս Խոփիկոպոս, 1298—1304. — ԺԴ. Դարու սկիզբը Ս. Կիրակոսի Ուխոնին միաբան եղբայրներն էին Աւետիք, Միսիթար, Դուիթ, Կարապիտ, Կոռապանդին, և Ստեփանոս. — Յիշա. ԺԴ. Դարի, էջ 29; Յ. Քիւրտեան, Երիզա, 1953, էջ 149:

2. — Աւետիք Ռոբունապես, 1443—4. — Իր աշակերտներէն ծանօթ է գրիչ տէր Խաչատուր Արեգան. — Յիշա. ԺԵ. Դարի, Ա. Մասն, էջ 556, 577:

3. — Յովհաննես Վարդապես, 1446. — Յիշա. ԺԵ. Դարի, Ա. Մասն, էջ 601:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. — Մշակութային կեանքը շափաւոր ծաղկում մը կը ցուցադրէ ԺԴ. Դարուն, յատկապէս գրչուգրական ահսակէտէ: Ծանօթ են հետեհալները.

Ա. — Աւետիք Արեգայ, Գրիչ, օրդի Վասիլի, 1304ին օրինակած է Աւետարն մը. — Յիշա. ԺԴ. Դարի, թ. 35:

Բ. — Ներսէս Սրդ, Կելլընցի, Գրազիր, 1314—39, օրինակած է,

1. — Աւետարն, 1314ին, Յովհաննես Արքայեղբօր ընտիր օրինակէն, Միսիթար Քանահայր Համար. — Յիշա. ԺԴ. Դարի, թ. 251:

2. — Աւետարն, 1325ին, Թիւուխարձէնցի Մելիքշահի Համար. — Երիզա, էջ 279:

3. — Փողովածոյ, 1332ին, Յովհաննես

Վարդապիտի խնդրանքով. — Ագոնց, Արաւետ Դիսուիսեայ Քերականի, 1915, էջ XXV:

4. — Աւետարն, 1335ին, Թիւուխարձէնցի Մելիքշահի պատուէրով. — Յիշա. ԺԴ. Դարի, թ. 339:

5. — Մանուկամուն, 1339ին. — Յիշա. ԺԴ. Դարի, թ. 393:

Գ. — Յովհաննէս Երկայն, Գրիչ, 1329—31. — Օրինակած է 1331ին մէկ ձաւոց, Բարսիկ միայնակեացի Համար. — Երիզա, էջ 281:

Դ. — Յակոր Քահանայ, Գրիչ, 1332ին օրինակած է մէկ Աւետարն, Դեղնքարցի Դաղարի պատուէրով. — Յիշա. ԺԴ. Դարի, թ. 311:

Ե. — Ազարիա Սբեղայ, Գրիչ, 1351ին, իր եղբօր Հայրապետ Երէցի ստիպումով, աւորած է օրինակութիւնը Աւետարանի մը, որուն սկիզբի մասերը գրաւած էին Սիմէռն անունով քահանայի մը կողմէ. Յիշա. ԺԴ. Դարի, թ. 468:

Զ. — Անահիա Գրիչ, 1364ին օրինակած է մէկ Փողովածոյ, Նորսէս քահանայի Համար. — Յիշա. ԺԴ. Դարի, թ. 564:

Է. — Սարգիս Գրիչ, 1443—6, աշակերտ տէր Խաչատուրի. օրինակած է,

1. — Միկուրիկի Մաքրեսի, Գրիգոր Տաթեացիի, 1443ին, օժանդակութեամբ իր ուսուցչին. — Յիշա. ԺԵ. Դարի, Ա. Մասն, թ. 630:

2. — Յայսմանուշ, 1446ին, գարծակցութեամբ քանի մը որեղաներու և սարկուազներու, Ներսէս քահանայի Համար: Սկարագ՝ Սամուէլ Վարդապիտ. — Յիշա. ԺԵ. Դարի Ա. Մասն, թ. 678:

Ը. — Խաչատուր Աբեղայ, Գրիչ, 1443—6. — Օրինակած է 1444ին մէկ Լուծմուն Պարապմանց Գոյց, Գրիգոր Տաթեացիի, իր Վարժապիտին Աւետիք Համառի օրինակէն. — Յիշա. ԺԵ. Դարի, Ա. Մասն, թ. 651:

Թ. — Պետրոս Աբդ. Թօխարցի, 1596ին օրինակած է մէկ Ասպինուրան. — Հանդ. Աժառ., 1896, էջ 241:

Ն. ԵՊԱ. ՄԱՎԱԿԱՆ

Տ Ո Ւ Շ Ա Տ Օ Ւ

ԱՊՐԻԼԵԱՆ ԶՈԼԵՐՈՒԽ ՀԱՄԱՐ

Այս տարի, Առևլուալեմի հայկական բոլոր միութիւնները, Հ. Յ. Մ., Ս. Թ. Շ. Մ., Արագա, Ա. Հ. Բ. Մ., Հ. Օ. Մ. և Հ. Մ. Ը. Մ., գովելի նախաձեռնորդինք ունեցան միասնաբար ողբեկչելու Ապրիլեան Անձ Նղեռնի զններու յիշատակը: Հանդէար տղի ունեցած Եռևաղեմացի Հայոց Բարեխիւրական Միութիւն ակուբբին մէջ, Աւրքար, 24 Ապրիլի երեկոյեան: Կը նախազանէր Ա. Արուռոյ Լուսաւարապիս Գերօ. Տ. Հայրիկ Արքեպա. Ալաբանան: Ներկայ եր սուլար բազմութիւն մը տեղացի եւ ուժաւոր. ժողովուրդի:

Բարեխիւրապիս Միութիւն Առենապէս Գր. Անգրանիկ Պազրենեանի բացման խօսքն ես, գործադրուեցաւ աւելի բան երկու ժամ տեղով լոյսողիք մը, բայցիցան բանախօսութիւններէ, խմբերգներէ, մեներգներէ եւ ուղերձներէ:

Առաջին բանախօսն եր Տիառ Արա Քալայնեանիք, որ պատմականը բրատ Ապրիլեան Նղեռնը կանխող ըջանին եւ զմելակ տարինեռուն, ընելով պատմականը նոյն ատեն Հայկ սկան Պատին եւ մեր Յեղափոխական կազմակերպութիւննեռուն:

Եւկրոգ բանախօսն եր Տիառ Մեսոսպ Երկրեանը, որ ծանրացաւ առաւելութան Հայ Տեղի արժանիքնեռուն, զբացնելով սուկայն ահաւորութիւնը սփիւռքի մէջ մեզ մեզի սպանացող «ներմակ ջարդին»: Տեր-Զօրը, բառու, այսօր կը գտնուի սփիւռքի բացասաննեռուն վայ ապրող ամեն հայու հոգիին մէջ, եր ամ կ'ուժանայ հայկալուն իհանեն եւ հայուն տօնմիկ արժեններէն ու առաջիւններէն: Եւ շեշտեց կարիք միասնական նիգերով զիմուռութիւն այս աղէքը, մոռքուր եւ անխորական հոյրենասիրութեան ոգիով զօրացած:

Մըբաց Թարգմանչաց նրանաւարտից Միութիւն երկան երգչախումբը, Գր. Վահկ

Քալայնեանի ղեկավարութեամբ երգեց մեր նահատակներուն ծօնուած աւուր պատմակ երգել: Գր. Կոր Կիւլոյիանը ներեցնումով եւ մեծ յաջողութեամբ, ինչպէս միւս, այս առարի եւս արտասանեց Անոյ Գրիգորեան նեն եերուած մը, յուզումի տանելով բոլոր ունինգիւնները: Արակ Միութիւն անդամներէն Գր. Վարդան Տեր Մարոսեանը ուղիւնավոր մը շեշտեց նահատակաց յուշարձանի մը անհրաժեշտութիւնը Ցողանեանի մէջ:

Լուսաւարապէս Մթազանը իր փակման խօսքով, նախ իր գանոննակուրիւնը յայտնեց բոլոր Միութիւններուն, որոնք Ապրիլեան յուշասօնը միասնաբար տօնելու գեղիցիկ զաղափարն էին ունեցեր: Յետոյ անգրագունալով այս առիրով եղած խօսքնեռուն եւ ողբեկչումնեռուն, բառու «Ներեզմաններուն մէջ միայն կարելի է մտածել անմանութեան վրայ, ու չկայ աւելի մեծ եւ պիշտի գերեզմանն եւ գերեզմանոց, բան մեռերդացը Ապրիլեան զնիերուն՝ որուն յուն ու պատկեր այսօր անզամ մը եւս կը վերանուզակի տանելու աշերուն մէջ, մեր միքը տանելով Ցեղի անմանութեան: Տիուր է պատկերը, բայց ոչ անարզ, որովհետեւ հօն կայ իր արժեններուն եւ զոյուրեան համար կուռող ժողովուրդի մը գերազոյն նիզը: Մաս մը որ կամքով եւ յօժառութեամբ կը դիմուորուի, մաս չէ այլ անմանութիւն, կ'ըսէ մեր մեծ դիմուորուի նիշէկն: Մուզի օրուան մը յիշտառին է որ կը տօնենք, սակայն փոռքի մը եւ հոգեկան բարքանակի մը զբացումով է որ կը լցուինք: Կորսնուցինք, բայց շլորառեցանիք: Մեր մեսենները մեր անմանութիւնը սինեցին, զանգի մեռած ապրելու յօյով ու հաւատելով: Յետոյ նույն արտասանեց բոլոր մեր նահատակներուն նոգիի խոպանութեան համար որոնք մեռած իշենց կրօնիքի եւ Հայրենիքի զոյաշեմոնի ի խնդիր:

Ո. ՅԵԿԱԲԻ ՆԵՐՍԻԿԻ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆՔ - ԲԵՄԱԿԱՆՆՔ

● Կիր. 5 Ապրիլ. — Տնեսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիրը ժամարարն էր Հոգ. Տ. Գանիել Արդ. Շամբեան: Ս. Պատարագէն մաս մը ձայնասփռուեցաւ Յորդանանեան ռատիօկալանէն:

● Եր. 11 Ապրիլ. — Ս. Քառունին մանկանց Աթասիոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիրը ժամարարն էր Արժ. Տ. Կարապետ Քնչյ. Անդրէասեան: Վերաբերումը կատարուեցաւ Ս. 40 մանկանց նկարին զիմաց կառացուած շարժական սեղանին վրայէն, որուն մօտք, ջրալից կաթսայի մը մէջ, առցանդատաւանդական լիճը խորհրդանշող, կը ուղարային քառագոյն կանթեղներ:

— Կէսօրէ ետք, Ամեն. Ս. Պատրիարքը Հօր գլխաւորութեամբ, Միասնութիւնը Հըսչափաւով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Ս. Գերեզմանին և Գիւտ Խաչի այրի ուստիերէն ետք, ժամերգութիւնն ու նախատուակը պաշտեցան Ս. Կիր. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ազա կատարուեցաւ Տնօրինական: Ս. Տեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս Թափօրապիոն էր Հոգ. Տ. Սամուէլ Արդ. Աղոյեան:

● Կիր. 12 Ապրիլ. — Քատարին: Գիշերային և առաւտեան ժամերգութիւնները պաշտըւեցան ի Ս. Լուսաւորիչ: Ազա Ամեն. Ս. Պատրիարք Տայրը հանդիսաւոր Ս. Պատարագ մատուց Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, որմէ ետք նախագահէց նոյնին և Պատանաւուելոյն շարչ կատարուած ժեծանանդէս թափօրին:

● Ուր. 17 Ապրիլ. — Նախատուակին ի Ս. Յակոբ Նախագահնց Լուսարարապետ Գերը. Տ. Հայրիկ Արքեպոս:

● Եր. 18 Ապրիլ. — Ս. Հօրի Մերօ Գրիգոր Լուսաւորին Մտնի ի Վիրապ տօնին առթիւ, առաւտեան ժամերգութիւններ ետք, Ս. Լուսաւորիչ մասունքը ի բնակուարաւոնէն թափօրով փոխարգուեցաւ Աւագ Սեղան, ձեռամբ Լուսարարապետ Գերը. Ս. Հօրի Ազա Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւանդատան Ս. Լուսաւորիչ սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր:

— Կէսօրէ ետք, Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեանի գլխաւորութեամբ, Միարանութիւնէն մաս մը ինքնաշարժերով մեկնեցաւ Զիմենեաց լեռ, ուր Համբարձման Սրբատեղոյ մատարան մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատուակը, իսկ գիշերասկիդրին՝ եկեղեցին և Հովհանն արարողութիւններ և առաւտեան ժամերգութիւններ: Մատուցուեցաւ նաև Ս. Պատարագ: Ժամարարն էր, ըստ սովորութեան, Սրբավայրին Տեսուչը՝ Հոգ. Տ. Սամուէլ Արդ. Աղոյեան: Արարողութիւնները առարտեցան գիշերուան ժամը 11 ին:

● Կիր. 19 Ապրիլ. — Գայսեան: Առաւտեան ժամը 7:30 ին, լուսարարապետ Գերը. Տ. Հայրիկ Արքեպոսի գլխաւորութեամբ, Միարանութիւնը ինքնաշարժերով մեկնեցաւ Զիմենեաց լեռ ու Հըսչափաւովով մուտք գործեց Համբարձման Սրբատեղին, ուր մեր վրանամատրան մէջ հանդիսաւորապէս Ս. Պատարագը մատուց Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան, եպիսկոպոսական խոյր ի դլուխ:

— Ս. Կոյսի Աւետման նախատուակին ի Ս. Յակոբ Նախագահնց Լուսարարապետ Գերը. Տ. Հայրիկ Արքեպոս:

● Ել. 20 Ապրիլ. — Աւետման Ս. Աստուածածի: Առաւտեան ժամը 8:30, լուսարարապետ Գերը. Տ. Հայրիկ Արքեպոսի գլխաւորութեամբ, Միարանութիւնը ինքնաշարժերով մեկնեցաւ Գելիսեանի մորը ու Հըսչափաւովով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց Գերը. Լուսարարապետ Սրբազնը և բարողեց աւուր պատշաճի:

● Ել. 23 Ապրիլ. — Իրիկնադէմին, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Մեծ Պահոց Եկեղեցի վերջին ժամերգութիւնը:

● Ուր. 24 Ապրիլ. — Ել. որ մեծ պահոց: Առաւտեան, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Մեծ Պահոց Եկեղեցի վերջին ժամերգութիւնը, իսկ երեկոյեան վերջին վիպական ժամերգութիւնը, ժամերգութիւնը ստացաւ Ս. Հաղպատութիւն:

● Եր. 25 Ապրիլ. — Ցիառակ յարտիեան Դաշտու: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գրիգորիի: Ժամարարն էր Հոգ. Տ. Հոգ. Վարդանութիւնը Հըսչափաւովով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցաւ հերեկոյեան ժամերգութիւնն ու նախատուակը: Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ազա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս Թափօրապիոն էր Հոգ. Տ. Արշակ Արդ. Խաչատրեան:

— Կէսօրէ ետք, զաղուան նակազագարդի տոնին առթիւզ, Ամեն. Ս. Պատրիարքը Հօր գլխաւորութեամբ, Միարանութիւնը Հըսչափաւովով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցաւ հերեկոյեան ժամերգութիւնն ու նախատուակը: Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ազա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս Թափօրապիոն էր Հոգ. Տ. Արշակ Արդ. Խաչատրեան:

● Կիր. 26 Ապրիլ. — Նակազարդ: Գիշերային և առաւտեան ժամերգութիւնները պաշտըւեցան և, կարճ զաղարք մը ետք. Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Սամուէլ Արդ. Աղոյեան: Ս. Պատարագն ետք կատարուեցաւ մեծանանդէս թափօրինութիւնը: Գիշերգմանին և Պատանաւուելոյ շուրջ, գլխաւորութեամբ Ամեն. Ս. Պատարագը Հօր: Թափօրականք ի ձեռին ունէին արմաւենեաց և ձիթենեաց ստեր, իսկ մեր թափօրին կը հետեւէին կապուց և Ասուրոց թափօրները: Արարողութիւնները աւարտեցան ժամը 11 ին, որմէ ետք Միարանութիւննը չքերթուած ձամբարայ ելու գեղիքի Մայրավանք և Հայոց թագի մուտքէն մը զիսորհուրդը շարականը երգելով բարձրացաւ Պատրիարքարան:

— Կէսօրէ ետք, Ս. Յակոբեանց Հքեղագարդուած Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ նախ Ալեգաստանու, Լուսարարապետ Գերը. Տ. Հայրիկ Արքեպօքի նախագահութեամբ, և ապա օրուան յատուկ շաբականներով ընդմիջուած երեկոյեան ժամերգութիւնը և Շոնորացէքսի խորհրդառոր արարողութիւնը, որու ընթացքին Հոգչ. Տ. Յակոբ Վրդ. Պարդանեան Աւագ Անդանի բեմն կարզաց հոգիոր սիրով և հաւատութիւն վարագոյր բացող բարեկալաւ ուխտորաց անուանացանկը, և կոչ ըրաւ ըստուրին որ իրենց լուսմաններով նպաստեն Աղունիկի Աղջ. Բուժարանին: Այդ նպատակաւ, պնակներ զհտեղուած էին եկեղեցու զոյտ մատքերուն:

● Քչ. 28 Ազգրիլ. — Աւագ Երեքօրիի (Յիշաւակ: անձ կուսանց): Բատ սովորութեան, Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Ցովհաննէս Աւետարանից մատրան մէջ, Ս. Յարութեան Տաճարի գաւիթը ժամարարն էր Հոգչ. Տ. Տաթէ Արդ. Ղարիպեան: Ազատ կատարուեցաւ Տնօրինական Սրբաւեղեաց այցելութեան թափոր Տաճարէն ներս: Թափօրագետն էր Հոգչ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան, որ թափօրի իւրաքանչիւր հանգրուենին ուխտաւորներուն տուաւ Սրբավայրերուն վերաբերեաւ լուսարանութիւնները:

● Եշ. 30 Ազգրիլ. — Աւագ Հինգօրիի (Յիշաւակ Հըրեւաց): Աւաւոտուն, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Աւագ Ազգաշխարդողաց: Կարձ գագարէ ետք, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ ժամարարարն էր Գերը. Տ. Տուրէն Արքեպօք, Քէմհանձան: Կարզացուեցաւ Ս. Բարեկան Հայրապետի Հազորդութեան ձառք: Բազմահարիւր հաւատացեալներ ստացան Ս. Հազորդութիւն:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Յիշաւակայի կարգը, տպաւորիչ խորհրդաւորութեամբ և նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր: Լուսցումի արարութենէն ետք, ըստ սովորութեան, Անկիլիքան Գերը. Արքեպօքը զգեստաւորուելով և Աւագ Անդան բարձրանալով, Անգլերէն Եղուով կարդաց Ս. Աւետարան: Արարողութեանց ներկայ եղաւ վաեմ: Մուշաքրղը, ինչոքէ նահապետական դէմքերէ և Հիւպատոսական Մարմիններէ բարձրաստիճան հրաւիրեալներ:

— Ժամը 7ին, փոքր թափօր մը այցելեց Ս. Հրեշտակապետաց եկեղեցին (Քիստոսի Աւաշին Բանտոր): Ս. Զիթենիի ծառին առջև կատարուած Աւետարանի ընթերցումէն ետք, եկեղեցու տեսուչ Հոգչ. Տ. Արշակ Արդ. Խաչատուրեան իսկացաւ Ցիսուսի չարչարանաց խորհրդին չուրծ: ուխտաւորներուն ըրաւ նահապատականը նոյն վանքին:

— Իրիկուան ժամը 7ին, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Յիշաւարմանւ կարգը, տիրազգեցիկ խորհրդաւորութեամբ, որ տեսեց մինչև կէս գիշեր: Ամեն. Ս. Պատրիարք Հայրը կուռ քարողով մը վեր հանեց ւացի դիշերութեանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

● Բչ. 6 Ազգրիլ. — Լիբանանեան նոր Ընդհ. Հիւպատոս Պր. Թէվֆիք Եաթիւա և հաւական նոր Ընդհ. Հիւպատոս Պր. Մարիօ Թօնիքիլի իրենց առաջին այցելութիւնը տուին Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

● Բչ. 22 Ազգրիլ. — Խոլամաց Գուրզան պայքամի տօնին առիթով, Կէսօրէ առաջ, Լուսարարապետ Գերը. Տ. Հայրիկ Արքեպօք, ընկերակցութեամբ Աւագ Թարգման Հոգչ. Տ. Գէորգ Վրդ. ի Քարտուզար Տիւր Կարպիս Հինգիւանի, Հնորհաւորական այցելութիւն տուաւ Քաղաքացին Վազմ. Մուշաքրղին, Աստի կանագետին, Քաղաքապետին, Սէռտի Արարական Հիւպատոսին և նախկին Մուշաքրղին Էնվէր Խոսկէյպիի:

— Եօյն առիթով, Ամեն. Սըր. Պատրիարք Հայրը իր, Ս. Յակոբեանց Միարանութեան և Արդանանի Հայմայնքին անունով Հնորհաւորական հեռագետիր մը րլեց Ամմանի Արշանիքի:

● Կիր. 26 Ազգրիլ. — Դիշերուան ժամը 9ին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Հոգչ. Հւզբերու հետ, բացումը կատարեց Հայ Երիտասարդաց Միարան Ակումբի նոր և ընդարձակ սրացին:

Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ա Խ Ա Գ Ա

7 Մարտի Եարաթ երեկոյեան, Ժառանգաւորաց Վարժարանի Հանդիսասրահին մէջ կատարուեցաւ Ամերիկանայ տաղանդաւոր դաշնականարունի Օր. Լիւսի Իշխանեանի նուագահանդէսը Շնորհալի Օրիսրդը ամիսներէ իվեր ըրչապտոյտի էր ելած Միջին Արևելք և նուագահանդէսները տուած զանազան երկիրներու մէջ, արժանանալով ժողովուրդի անվերապահ գնահատանքին ու հիացումին: Հանգիւնի կը նախագահէր Ս. Աթոռոյն Ամեն. Ս. Պատրիարք Հայրը: Ներկայ էին Միարանութեան անդամները և ստուարաթիւ ժողովուրդ:

Շուրջ մէկուկս ժամերու ընթացքին, շնորհալի դաշնականարունին ուշագրաւորէն յաջող մենակատարումով նուագեց եւրոպական դասսական ինչպէս նաեւ հայկական երաժշտութենէն կտորներ, զեղարուեստական իսկական վայելքի պահեր պարգևելով ունկնդիրներուն և արժանանալով անոնց որոտընդուած ու երկարան ծափահարութիւններուն:

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը իր Փակման խօսքին մէջ շնորհաւորեց ապանդաւոր արուեստագիտունին, ուշեւտելով իր արուեստին նրբութիւնն ու յաջողութիւնը, մաղթեց անոր նորանոր նուանումներ երաժշտական ասպարէզի մէջ:

**«Սի՛ն» և ԽՄԲԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԵԽ ԿԻՒՂԵՆԿԵՍՆ ՄԱՏԵՆԱԳՈՐԾՆԸ
ՇՆՈՐՀԱԿՈՒԹԻՄԸ ԱՄԲ ԱՄԱՅՆԸ ԵՆ ՀԵՏԵՒԵՈՒ
ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Հարս ու կեսուր (կատակերգութիւն 3 տրար) - Սիմոն Գրեմ (Սիմոն էքմէքճեան),
Քուլիս Մատենաշար թիւ 1։ Հրատ. և տպագրութիւն Քուլիս Տպարանի, 1963,
էջ 57։ Նուէր «Քուլիս»։

Հայ Պատանին նարակիցը - Հրատարակեց Նուպար Ա. Սրկ. Պէրպէրեան (նուիրատու), Պէյրութ, Հրատ. Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կիրակնօրեայ Դպրոցներու, 1963, էջ 59։

ԱՕՔՍԷՆ ԱՄԱՁԱՆՔ ՀԱՄԱԿԵՄՈՒ ԳԻՐՔԵՐԸ. -

- ա) Սայաբ - Նովա - Գիտական աշխատությունների ժողովածու, Երեվան, Հայկական ՍՍԾ Մինիստրների Սովորակ Բարձր. և Միջնակարգ Մասնագիտական Կրթության Կամբառ, 1963, էջ 231։
- բ) Արձակ էջեր - Մ. Վեհապեր: Երեվան, Հայպետհրատ, 1963, էջ 334։
- շ) Հարազատ Ջայնիր - Մարտին Քարամյան: Սովորակարաց Պուետների ըանաստեղծություններից, Թիֆլիս, Պետական Հրատարակչություն, 1963, էջ 139։
- դ) Կյանքը Կրակի Տակ - Մկրտիչ Սարգսյան: Երեվան, Հայպետհրատ, 1963, էջ 409։
- ե) Մրկերի Ժողովածու (Հատոր Երկրորդ) - Պերճ Պռաշյան: Երեվան, Հայպետհրատ, 1962, էջ 680։
- զ) Նոյնին Երբորդ Հատորը: Երեվան, Հայպետհրատ, 1963, էջ 600։
- է) Սայաբ - Նովայի Անեղծագործութեան Ժողովրդական Ակունքները - Ա. Տ. Ղանալանյան: Երեվան, Հայպետհրատ, ՍՍԾ ԳԱ Հրատարակչություն, 1963, էջ 80։
- ը) Սայաբ - Նովա - Հոգվածներ ևլ ճառեր: Հոգհ. Թումանյան: Երեվան, Հայկական ՍՍԾ ԳԱ Հրատարակչություն, 1963, էջ 97։
- թ) Սայաբ - Նովա - Խ. Ս. Սարգսյան: Երեվան, Հայկական ՍՍԾ ԳԱ Հրատարակչություն, 1963, էջ 125։
- ժ) Խաշատուր Աբովյան - Հրայր Մուրադյան: Երեվան, Հայպետհրատ, 1963, էջ 182։
- ժա) Մրկերի Ժողովածու (Հատոր Ա.): Անափայէլ Պատկանյան: Երեվան, Հայկական ՍՍԾ ԳԱ Հրատարակչություն, 1963, էջ 343։
- ժբ) Հայ Ժողովրդի Պատմություն (Հատոր Ա.): Էմբագրութեամբ Պրոֆ. Վ. Ա. Պարսամյանի, Երեվան, Հայպետումանկիհրատ, 1963, էջ 484։
- ժգ) Մրեվանի Պատմություն (1879-1917) - Թ. Խ. Յակոբյան: Երեվան, Երեվանի Համալսարանի Հրատարակչություն, 1963, էջ 606։
- ժդ) Հայ Ժողովրդական Խաղեր - Աշխատասիրութեամբ Վ. Բդայանի: Երեվան, Հայկական ՍՍԾ ԳԱ Հրատարակչութիւն, 1963, էջ 295։
- Մաղկեփունջ Հարիւր Պատմութիւններու - Կ. Ա. Թիգիեան (նուիրատու), Պէյրութ, 1964, էջ 132։

تصدرها - بطريركية الارمن الارثوذكس المدير والمحرر المسؤول - صاحب النافذة رئيس الاساقفة هايكازون ابراهيمان
مايو ١٩٦٤ نطبع في مطبعة دير الارمن - القدس العدد ٥

Նարեկ - Տպուած 1755ին: Էջ 576: Նուէր Միաբան Ռամայէլ Ճէնազեանէ:
Ամենուն Տարեգիրքը (ԺԱ. Տարի, 1964) - Կարօ Գէսրգեան: Նուէր Եղիշէ Մելիքեանէ,
Պէյրութ, էջ 230:

Հասկամաղ Բրօֆ. Տ. Կ. Լիւլենեանի (Բագրատ) - Գրական Վաստակը և 1915ի Բանտի
Յուշերը: Ֆրէդնո, 1955: Նուէր Հ. Բ. Բ. Մ. Էն, Նիւ Եորք, էջ 691:

Հապուսի Գիւղին Պատմութիւնը - Հրատ. Հապուսի Գիւղի Հայրենասիրաց Ընկերու-
թեան: Նուէր Մ. Գ. Յակոբեանէ: Պաստան, 1963, էջ 261:

THE GOLDEN AGE IN THE FIFTH CENTURY - An introduction to Armenian Literature in Perspective. A. A. Bedikian (presented by the author). New York, Armenian Missionary Association of America, Inc. 1963, pp. 128.

ANNUAL REPORT FOR THE YEAR 1962-63 - Harvard University Library. By Paul Herman Buck. Cambridge, 1963, pp. 28.

GUIDE POUR LES CANDIDATS AU B. E. P. C. (Rédactions) - Krikor Afarian (présenté par l'auteur). Beyrouth, pages 36.

VARTANANC - Térénig Démirdjian. Présenté et adapté Par Victor Gardon. Traduit de l'Arménien par Dikran Kirazian. Paris, Stock, 1963, pp. 325.

LA SYRENE DE MYTILENE (Roman) - Armand J. Bedrossian. Présenté par l'auteur. Paris, Impr. Pascal, 1963, pp. 158.

(Ծարունակելի)

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՐ՝

ՍԻՐՆ Ա.Ր.ՔԵՊՈ. ՄՈ.ՆՈՒԿԵՍ.ՆԻ

ԱԻԵՏԱՐԱՆԻ ՊԱՏԳԱՄՆԵՐ

Բ. Տպագրութիւն

ՏՈՒԹՅ. ՀՈ.ՄԲՈ.ՐՉՈՒՄ ՔԵ.ՔԼ.ԻԿԵՍ.ՆԻ

Քննադատական վերհպումները՝

Նիրվանզատէի,

Զօնրապի,

Զարդարեանի,

Ոհարոնեանի,

Խառհակեանի եւ այլոց մասին:

Գործին մեծ մասը նուիրուած է Եղիշէ Զարենցի:

Կը պարունակէ նաեւ իր գրական եւ ուսումնասիրական յօդուածները: